

# ՄԱՐԶԻԿ

ՀՄԸՄ

مارزیک

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԳ. ՏԱՐԻ, 2005, ԹԻԻ 7 (277) VOL. XXIV N°7

السنة الرابعة والعشرون العدد السابع



ՖԻԼԱՏԵԼՖԻԱ. ՄԻԶ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ  
15ՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐ





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԾԻՒՂ՝ ՄՈՒՍՈՒԼԻ ՄԷՉ

Համեմատական իր պատմությունը վերագտնող Իրաքի հայությունը օրէ օր կ'առնէ ինքնակազմակերպման կարեւոր քայլեր, որոնք արտայայտութիւն կը գտնեն նաեւ ազգային կազմակերպութիւններու տեղական մասնաճիւղերու ստեղծումով:

Հ.Մ.Ը.Մ.ը առաջիններէն էր, որ Նոյեմբեր 2003ին Պաղտատ վերադարձաւ 35 տարուան ակամայ բացակայութենէ ետք: Պաղտատի հայութեան օրինակով, Օգոստոսին, Մուսուլի հայությունը եւս Հ.Մ.Ը.Մ.ը վերագտաւ տարիներու ընդմիջումէ ետք:



Արդարեւ, 20 Օգոստոս 2005ին, Հայէպի «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան մէջ, յատուկ արարողութեամբ մը, Հ.Մ.Ը.Մ.ի Մուսուլի միաւորէն չորս վարչականներ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութենէն պաշտօնապէս ստանձնեցին միութեան դրօշն ու կանոնագիրը եւ Մուսուլի իրենց կազմակերպութիւնը հռչակեցին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ:

Հանդիսաւոր այս արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-



կան Վարչութեան անդամ եղբայրներ՝ Գառնիկ Մկրտիչեան, Կարօ Թիրփինճեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Գէորգ Կարապետեան: Ներկայ եղան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաւտ. Խորհուրդի անդամներ:

Այսօր, Մուսուլի մէջ կ'ապրին 2500 հայեր: Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը տեղացիներուն ծանօթ է իբրեւ «Նէտի Շէհիտ Սերոբ» (ի յիշատակ Իրաք-Իրան պատերազմին զոհուած հայ երիտասարդի մը): Մասնաճիւղը ունի 85 սկաւտ, պասքեթպոլի եւ փինկ փոնկի խումբեր:

Ապահովական ծանօթ պայմաններու բերումով, մասնաճիւղին սկաւտական աշխատանքները կը կատարուին 15 օրը անգամ մը, քաղաքէն դուրս, վանքի մը շրջափակին մէջ:

## «ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Քոյր Գարմէն Տէր Կարապետեան (Արեւմտեան Մ. Նահանգներ) \$100

●Եղբ. Ծորն Տալլեանի մահուան առիթով՝  
եղբ. Միհրան Շիմշիրեան \$50


[www.homenetmen.org](http://www.homenetmen.org)

Հ. Մ. Ը. Մ. Ի ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՄԱՅԱՆՅԻ ՆՈՐ ՀԱՍՅԷՆ



# ԹԻՒՆԻՆ ՆԻՆԹԵՐՆ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعیه المومتمن الریاضی



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Վարչագիտական	3
■ Յուշեր	6
■ Պատմութեան Համար	10
■ Մասնանիւղէ Մասնանիւղ	16
■ Մեր Կորուստները	36



18



16

2-15:00

## ԲԱԺԻՆՆԵՐ

■ Մարզական Գիտութիւն	12
■ Առողջ Միջավայր	14
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40



28

Մարզական ամսաթերթ  
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 Ի.Գ. ՏԱՐԻ, 2005, ԹԻՒ 7 (277)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզէն Աւագեան  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ  
 Սեդա Պէշլեան  
 «ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Աբօ Մոսիկեան  
 Իշխան Եղիայեան  
 Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Հրաչ Տէր Սարգիսեան, Տրքթ. Միսաք  
 Արշունանեան, Ա. Ա., Ալին  
 Զէյրունյեան, Պետրոս Շեննեւեան,  
 Կարպիս Գուլումեան, Սայրի  
 Լատոյեան եւ շրջաններու  
 թղթակիցներ:

Էջադրում - Զարեհ Զօրէքճեան  
 Գրաշարութիւն - Թամար Արովեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողմի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Համուտ, Ճինիչեանի Թաղ  
 Թիւ 65 Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատաւաճառի սակն է 3000 լ.ն.:  
 Տարեկան բաժանորդագրութեան  
 սակ ճշդուած է 35000 լ.ն.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մէլուսի  
 եւ Երջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



Ն Ա Կ Ր

# Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

**Մ.Ը.Մ.ի նման մարմնակրթական միություններու մէջ փրնտրոուած արժանիք մըն է հեղինակութիւնը, որուն անհրաժեշտութիւնը օրէ օր աւելի կը զգացուի սկստական թէ մարդկական պատասխանատուներու մօտ:**

Սկստուտ խմբապետ մը կամ պատրաստողի խումբի մարզիչ մը որքան ալ հմտութեան տէր ըլլայ եւ գիտելիքներու տիրապետէ, չի կրնար օգտակար ըլլալ, եթէ հեղինակութիւն չունի իր խնամքին յանձնուած տղոց վրայ:

Կը սիրուին ու կը յարգուին այն պատասխանատուները, որոնք բարի են, բայց նաեւ՝ խստապահանջ: Աններոյ են փոքր թերութիւններու նկատմամբ, բայց ոչ՝ քինախնդիր: Ընդհակառակն, չեն սիրուիր անոնք որոնք թոյլ են եւ իրենց վստահուած պատանիներու քմայքին կը ծառայեն, իբրեւ թէ վանոնք ներգրաւելու համար:

Պատասխանատուի մը նկարագիրը մեծ դեր ունի նորահաս տղոց կրթութեան աշխատանքին մէջ:

Օրինակները ցոյց տուած են, որ համակրանք չեն վայելէր այն պատասխանատուները, որոնք կարգապահութիւնը կը շփոթեն անտեղի խստութեան հետ, հեղինակութիւնը՝ մեծամտութեան եւ եասսիրութեան հետ: Նման ընթացքներ զգուանք կ'առթեն պատանիներու:

Անգամ մը որ պատանին խրտչի պատասխանատուէն, այլեւս աւելորդ կը դառնայ անոր ներկայութիւնը միութենէն ներս: Հաւաքները կամ խաղերը կը դառնան հետաքրքրութենէ զուրկ, իսկ հանդիպումները՝ ձանձրացուցիչ: Դիտողութիւնները եւս անլսելի ու անօգուտ կը դառնան:

Պատասխանատուի մը առաջնահերթ պարտականութիւնն է նախ՝ սիրել պատանիները ու սիրուիլ անոնցմէ: Ապա՝ հետաքրքրական դարձնել իր աշխատանքները: Ու այն ատեն միայն ան կը յաջողի իր առաքելութեան մէջ:

Հեղինակութիւնը պարտադրանքով ձեռք չի ձգուիր: Ինչպէս որ լացը տկարներու վէնքն է, նոյնպէս ալ՝ պարտադրանքը, աննշան արարքի մը համար խիստ դիտողութիւնը՝ տկար եւ հեղինակ

կութենէ զուրկ պատասխանատուի մը վէնքն է, ո՛չ ապդու վէնք մը, որ խորքին մէջ կարգապահական հարց մը առժամաբար կը լուծէ միայն, աւելի ուշ սակայն դարձեալ բորբոքելու համար:

Պատանիներու համար ամէնէն ապդու կաշկանդիչ ուժը կը կայանայ պատասխանատուին ձեռք բերած անձնական հմայքին մէջ, զոր կարելի է ունենալ հեղինակութեամբ, իսկ հեղինակութիւնը կը շահուի փորձառութեամբ, լայնախոհութեամբ, իտէպալ ու նկարագիր ունենալով, ու մասնաւա՛նդ՝ դիմացիին վրայ ապդելու կարողութեամբ:

Պատասխանատու մը եթէ չունի այս յատկութիւնները, կը նկատուի ձախողած մը, որ չի կրնար բաղձալի արդիւնքներու հասնիլ, նոյնիսկ եթէ մեծամեծ վկայականներու կամ պաշտօններու տիրացած է ան:

Պատասխանատուի մը հմտութիւնը շատ կարեւոր ըլլալով հանդերձ, կան նաեւ կարգ մը աշխատանքներ, զորս անտեսելու իրաւունք չունի ան, որպէսզի իր հեղինակութիւնը մնայ անխախտ: Իսկ այդ աշխատանքներուն թիւ մէկ թշնամին ծովութիւնն է, թիւ մէկ բարեկամը՝ ինքզինքը տեսաբար կատարելագործելը:

Գաղտնիք մը չէ, որ մեր օրերու պատանիները հարցաւէր են: Օրուան նորութիւններուն շատ մօտէն կը հետեւին եւ այս իմաստով անոնք յաճախ քայլ մըն ալ առաջ են իրենց մեծերէն: Ու բնական է, որ իրենց պատասխանատուին մէջ ժամանակակից չափանիշերով բանիմաց մարդը տեսնելու անոնց մարմաջը շատերու մէջ արթնցնէ հետաքրքրութեան ոգին եւ պատասխանատուին հմտութիւնը փորձելու փափաքը, որով պատասխանատուն եթէ անկարող ըլլայ բաւարարութիւն տալ անոնց հետաքրքրութեան, կ'արժեպրկուի յաշս իրենց եւ, ուրեմն, կը զրկուի ապդելու իր կարողութենէն, օգտակար դառնալու հնարաւորութենէն:

Հետեւաբար, կարեւոր է հեղինակութիւն ունենալ պատանիներու վրայ եւ ձեռք ձգուած հեղինակութիւնը տեսական ճիգով բարձր պահել՝ կերտելու համար վաղուան մեր առո՛ղջ սերունդները:

# ԴԷՊԻ ԳԵՐԱԶԱՆՅՈՒՄ ԾՐԱԳՐՈՒԱԾ ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

(Ա. ՄԱՍ)

Ստորև տրուած աշխատանքի նախագիծը, իբրև եռամեայ ծրագիր, պատրաստուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրայ Տէր Սարգիսեանի կողմէ, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանին համար: Իր շահեկանութեան համար սակայն, կ'արժէ որ ծրագիրը, իբրև վարչագիտական ծանօթութիւն, կարգ մը պատշաճեցումներով սեփականութիւնը դառնայ նաեւ մեր ընթերցողներուն ընդհանրապէս եւ միութենական շրջանակին յատկապէս:

## ՆԵՐԱԾԱԿԱՆ

Միութիւն մը կազմակերպուած հաւաքականութիւն է, ուր ընդհանրական նպատակները կը գերազանցեն անհատական հաշիւներն ու նախասիրութիւնները: Ժողովրդավար միջնորդութի մէջ մեծամասնութեան կողմէ տրուած որոշումները պարտադիր կը դառնան բոլորին, նոյնիսկ եթէ ոմանք համակարծիք չեն:

Կարելի չէ հաւաքականութեան մը մաս կազմել անուանական կամ ձեւական կերպով: Պատկանելիութիւն կ'ենթադրէ իրաւունքներու կողքին ունենալ պարտաւորութիւններ:

Միացեալ Նահանգներու անցեալի նախագահներէն ճոն Քենետի ըսած է, թէ կարեւոր չէ ի՞նչ կ'ակնկալես երկրէդ, կարեւոր է որ դո՛ւն ի՞նչ կու տաս եւ որքանո՞վ կը սատարես անոր բարգաւաճման ու յառաջդիմութեան:

Այս մօտեցումով ալ կը գործէ Հ.Մ.Ը.Մ.ականը: Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական իր դաստիարակութեամբ կը սորվի ծառայել՝ առանց որեւէ ակնկալութեան, իր բոլոր կարողութիւններն ու հնարաւոր միջոցները ի սպաս դնելով միութեան վերելքին:

Հաւաքական աշխատանք է, միութենական գործ է Հ.Մ.Ը.Մ.ի գործը: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալը մեզ կը դարձնէ աւելի յանձնառու մեր անձին, միութեան եւ ժողովուրդին հանդէպ:

Մեր բոլոր ճիգերը կը ձգտին հայ պատանիին ու երիտասարդին մէջ նախ կերտել մարդը, հայը եւ ապա՝ սկստուն ու մարզիկը: Այս է մեր առաքելութիւնը:

Իբրև մարմնակրթական միութիւն, իբրև բարոյականը կերտելու դպրոց, ուր սկստուորութիւնն ու մարմնամարզը միջոցներ են հայը հայ պահելու, աւելի յանձնառու դարձնելու մեր ազգին նկատմամբ, մարզական թէ սկստուական բոլոր



յաղթանակներն ու նուաճումները կը նկատուին կարեւոր, օգտակար, խրախուսիչ, բայց ոչ էական:

Եթէ մեր միութիւնը գործէր արհեստավարժ միջավայրի կամ պարտաւորութեան տակ, այն ատեն միայն յաղթանակները կը դառնային առաջնահերթութիւն: Ամերիկեան Ֆուլթոնի արհեստավարժ խումբերէն մէկուն յայտնի մարզիչը՝ Վինս Լոմպարտի ըսած է. «Յաղթելը միակ բանը չէ, այլ ամէն բան է»): Այս հասկացողութիւնը մեզի համար խորթ է եւ չի համապատասխաներ մեր միութեան նպատակին, որն է՝

«Պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ, «Ա. Սորվեցնելով ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ:

«Բ. Զարգացնելով պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատուի գգացումներ, համեմատելիութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,

«Գ. Համակելով միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգիով»:


**ԵՌԱՄԵԱՅ ԾՐԱԳԻՐ**

Ինչպէս որեւէ կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ. եւս տեւաբար կը ձգտի բարելաւել իր գործունէութեան դաշտը, վարչական, սկստուտական եւ մարզական բնագաւառներէն ներս:

Ահա թէ ինչու, օրուան մարտահրաւէրները դիմադրաւերու եւ պատանիներն ու երիտասարդները ներգրաւելու համար, կ'առաջադրենք վարչական, սկստուտական եւ մարզական բնագաւառներու համար ի գործ դնել եւսամեայ հետեւեալ ծրագիրը:

Ծրագիրը իր աւարտին պէտք է դիւրացնէ եւ կորիզ մը հանդիսանայ՝ ապագայ առողջ գործունէութեան եւ նորանոր ծրագիրներու իրականացման:

Յայտնենք, որ ծրագիրը կ'առաջադրէ յստակ լուծումներ՝ միութեանական հաւաքական եւ անհատական մտահոգութիւն-



ներու, որոնք այլեւայլ պատճառներով երկարատեւ մնացած են անպատասխան:

Այսպէս, հիմնական մտահոգութիւններ եղած են հետեւեալ կէտերը:-

- Միութեանական դաստիարակութիւն
  - Պատկանելիութեան գիտակցութիւն
  - Պարտականութեան գիտակցութիւն
  - Ապագայ ղեկավար քատրերու կազմութիւն
  - Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականներու պատրաստութիւն
  - Կարգապահութեան գիտակցութիւն
  - Փրոթոքոլային հասկացողութիւն
  - Յարգանք՝ նուիրապետական կարգերու
  - Մարզիչներու եւ խմբապետներու պատրաստութիւն
  - Ճշդապահութիւն եւ ժամկէտներու յարգում
  - Մարզիկներու որակաւորում
  - Միջ-մասնաճիւղային մարզական եւ սկստուտական ձեռնարկներ
  - Օրուան ղեկավարներու հետ գործակցութեան ամրապնդում
  - Անհանդուրժողութեան երեւոյթի դարմանում
- Գործող ամէն հաւաքականութեան մէջ գոյութիւն ունին համակրանքներ եւ հակակրանքներ, սակայն այս երեւոյթը պէտք է հասնի անհանդուրժողութեան: Հոն պէտք է տիրէ գործակցութեան ոգին:
- Այս ծրագրին յաջողութեան նախապայմանը կը կայանայ հաւաքական գործին մէջ: Ներկայ եւ անցեալի վարչականներ, խորհուրդներու անդամներ, մարզական եւ սկստուտական պատասխանատուներ, միասնաբար եւ համերաշխութեամբ պէտք է սատարեն ծրագրին յաջողութեան:
- Իւրաքանչիւր անհատ պէտք է գիտակցի եւ անվերապահօրէն մասնակից դառնայ ծրագրին յաջողութեան:

Ծրագիրը առաջնահերթութիւն կը նկատէ միութեան անդամները, ի մասնաւորի՝ պատանիներն ու երիտասարդները, անոնց ջամբելով ազգային ոգի, ստեղծելով յատուկ առիթներ՝ լսելու անոնց մտահոգութիւններն ու թելադրութիւնները:

Առաջնահերթութիւն է նաեւ մեր ապագայ ղեկավար քատրերու պատրաստութիւնը: Վերջապէս, անոնք պիտի ըլլան մեր ապագայ դաստիարակները, որոնց պիտի վստահուի մեր պատանիներուն ու երիտասարդներուն ազգային եւ միութենական դաստիարակութիւնը:

**ՆՊԱՏԱԿ**

- Եռամեայ ծրագրին նպատակներն են.-
- Անշեղօրէն կիրարկել շրջանին միութենական, սկառտական եւ մարզական ներքին կանոնադրութիւնները:
- Բարելաւել շրջանի վարչական, սկառտական եւ մարզական գործունէութիւնը:
- Պատրաստել երիտասարդ ղեկավար քատրեր՝ մեր ապագայ գործունէութեան համար:
- Ներգրաւել հայ պատանին ու երիտասարդը՝ ազգային պատկանելիութիւն եւ հայեցի ոգի ջամբելու համար անոր:
- Արթնցնել համագործակցութեան, զոհողութեան եւ ընկերասիրութեան ոգին, զօրաշարժի ենթարկելով մեր մարզուժը:
- Ստարել ներկայ ղեկավարութեան, մարզիչներու եւ խմբապետներու վերաւորակաւորման:

**ԾՐԱԳՐԻ ՆԻԹԵՐ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ**

Ծրագիրը կը բաղկանայ 4 բաժանումներէ եւ 8 ենթաբաժանումներէ:

- Բաժանումներ
- Ա. Վարչական
- Բ. Սկառտական
- Գ. Մարզական
- Դ. Կազմակերպչական

Ենթաբաժանումներ

1. Ապագայ ղեկավար քատրերու պատրաստութիւն
2. Դաստիարակչական
3. Մարզիչներու եւ խմբապետներու որակաւորում
4. Միջ-մասնաճիւղային սկառտական եւ մարզական ձեռնարկներ
5. Նոր մարզախաղեր
6. Գոյքեր եւ մարզասրահներ
7. «Մարզիկ» պաշտօնաթերթ, հրատարակչական եւ համացանց
8. Անդամական, պարգեւատրում - գնահատում

(Շար. 1)

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԱՄԻՈՅ 1970Ի ԱԽՈՅԵԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

(Գ. ՄԱՍ)

Թիւի մը ակամայ ընդհատումէն ետք, կը շարունակենք լոյս ընծայել Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ (1987 – 1999), բազմավաստակ եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի յուշերը, իբրև անցեալի ապրուած օրերէն փունջ մը յիշատակներ:

Ուրախայի է հաստատել, որ տոքթ. Արզումանեան այս յօդուածաշարքին կողքին, պատրաստած է նաև յուշերու ստուար այլ բաժիններ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Հաստատանի, Հարաւային Ամերիկայի եւ Աւստրալիոյ շրջաններ կատարած իր գործուղումներուն մասին:

## Տոքթ. Միսաք Արզումանեան ՄԱՆ ԽՈՍԷ

### ԱՆՄՈՒԱՅ ՅՈՒՇԱԳԵՊԵՐՈՒ ԵԶԱԿԻ ՓՈՒՆՋ ՄԸ

Յաջորդ երկու օրերուն, մեր կեցութիւնը «Արարատ»ի հոգատարութեան տակ պիտի անցնէինք:

Այդ հանգրուանի յիշարժան իրար զարձակութիւններուն չանցած, արդար պիտի ըլլայ արձանագրել քանի մը յուշադէպ (այցելութիւն, ընկերային հանդիպում, հրակէր), որոնք տեղի ունեցան, ըստ նախօրոք ճշդուած պաշտօնական

յայտագրին, եւ մեր կեցութեան տուին իւրայատուկ եւ անկրկնելի վարկ ու դիմագիծ:

Ա. Առաջին այցելութիւնը եղաւ փրոթոքոլային: Երեք ինքնաշարժներով, ոստիկանական շարադուլի մը առաջնորդութեամբ, հասանք պատկառագող ու յուշակոթողի մը առջեւ, որ բարձրացուած է Մոհամմէտ Ռեզա Շահին հօրը յիշատակին ու փառքին, եւ զետեղեցինք Շահավայել ծաղկեպսակ մը:



Լիբանանի 1969ի ախոյեան եւ Ասիոյ ախոյեան խումբերու ախոյեանութեան մասնակցած Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայի խումբը:

Երբ պահ մը յարգանքով ինքնամփոփ ու եցայ, արագ վերացումով մը տարուեցայ հայ ժողովուրդի անցեալին: Յիշեցի Պարսկաստանի հետ մեր պատմական երկարատեւ հակամարտութիւններն ու թշնամութիւնները: Յիշեցի

յատկապէս, Մամիկոնեան տոհմանունը կրող քաջամարտիկ սպարապետն ու զինակիցները, եւ իրենց նահատակութեամբ, հաւատքի եւ ուրոյն լեզուի կեցուցիչ ներգորութեամբ, ազգը անմահութեան արժանացուցած բիւրաւոր մարտիրոսները: Դաւաճան իր հայրը սպաննած՝ Մամուէլ Մամիկոնեանէն, Անյուշ բերդն ու հոն Շապուհի կողմէ սպաննուած՝ Վասակ Մամիկոնեանը: Շապուհի կանանոցը գերի առնող ու զայն վերադարձնող Մուշեղէն մինչեւ Սահակ Կաթողիկոսի թոռ՝ Մանուէլ Մամիկոնեանն ու Նուարասակի յաղթանակն ու դաշնագիրը:

Տակաւին, Շահ Աբասի տեղահանութիւնները եւ մեր ազատագրական շարժման ընթացքին, Թադէի վանքը եւ անոր առասպելական դերակատարութիւնը...:

Տարօրինակ կերպով, կարճ ժամանակի մը մէջ, ինչէ՛ր յիշեցուց ինձի պարսիկ իշխանատոհմին յուշակոթողը:

Բ. Թեքրանի քաղաքապետութեան կողմէ տրուած ճաշկերոյթը կը յիշեմ հանդիպով: Ծանօթացանք քաղաքապետին եւ հետաքրքրութեամբ հետեւեցանք իւրաքանչիւր խումբին կենցաղագիտութեան ցուցանիշ՝ իւրայատուկ ճաշկանածելին:

Գ. Առանձնապէս յիշարժան կը մնան Կիւլիստանի պալատին՝ պարտէզին ու թանգարանին տրուած այցելութիւնները:

Տեսարժան այս վայրերը, իրենց պատմական անգնահատելի արժէքով, ու երկար յամեցող կախարդական բոյր ու թոյրով, եզակի վայելք եղան, ու տարին մեզ՝

- իր «Շահնամե»ով նշանաւոր Ֆիրտուսին.
- «Քառեակ»ներով հռչակաւոր Օմար Խայեամին.
- Եւ մանաւանդ, Կիւլիստանը անմահացուցած Սաստիին քերթողական աշխարհները:

Այդ օրը մեզի համար եղաւ գեղեցիկին, վսեմին, թանկարժէք բաներու հետ հաղորդակցութեան եւ հոգեմտաւոր ապրումներու միակ օրը:

### ՄՈՂԱՍՄԷՏ ՌԵՁԱ ՇԱՀՆ ՈՒ... «ԱՐԱՄԱՆԷ»Ն


Երբ խօսքը Պարսկաստանի մասին է, ինչպէս չյիշել հանդիպումներուս շարքին, տեսակցութիւնս ու խօսակցութիւնս երկրի թիւ մէկ իշխանաւորին՝ Շահին հետ:

Պատուիրակութեանց պետերը յայտագիրէն տեղեակ էին, որ մարզական նորակառոյց համալիրի մը բացման պաշտօնական հանդիսութիւնը տեղի պիտի ունենար, բարձր հովանաւորութեամբ Շահին: Հետեւաբար, օրին, ես ալ Լիբանանը ներկայացնելու հրաւէրը ստացայ:

Երբ հետաքրքրութեամբ հասայ հանդիսավայրը, տպաւորիչ եղաւ տեսնել, պետական ու զինուորական աւագանիով կազմուած՝ ընդունելութեան պատկառագոյն ջոկատը, որ շէնքին մուտքին, կարմիր գորգը կ'եզերէր... սպասելով Շահին ժամանումը:

Մեզի՛ հիւր ներկայացուցիչներուս ալ տեղ նախատեսուած էր, ջոկատի շարքին շարունակութեան:

Փողերախումբի նուագակցութեամբ, իրարանցումի մթնոլորտի մը մէջ, հասաւ վերջապէս Շահը իր շքախումբով, եւ պատուոյ խումբի անդամները ողջունելով, մէկ առ մէկ



Յուշակոթողի այցելութիւն եւ ծաղկեպսակի գետեղում: Զախէն աջ՝ տիկ. Փազիկ Արզումանեան, եղբ. Միսաք Արզումանեան, մարզական խմբագիր եղբ. Յակոբ Գալիաքեան, եղբ. Փիրայր Խաչատուրեան եւ տիկ. Ագապի Նալպանտեան:

ձեռնուելով անոնց հետ, հասաւ հիւր պատուիրակութիւններուն, որոնք Զօր-Մոքրիին կողմէ ներկայացուցան անոր:

Ես՝ շարքին վերջին հիւր ներկայացուցիչն էի: Զեռքը երկարեց, ձեռնուեցաւ հետս, աչքերը սեւեռած լամբակս զարդարող Հ.Մ.Լ.Մ.ի եւ Լիբանանի խորհրդանիշ գոյգ կրծքանշաններուն: Զինքը առաջնորդող Զօրավարին հետ պարսկերէն քանի մը նախադասութիւններ փոխանակեց: Ըսածներէն բան մը հասկնալի չէր ինձի, մինչեւ որ ականջիս զարկաւ բառ մը՝ «Արամանէ» կամ «Արմանէ»:

Յստակ էր, հայ ըլլալս կը ստուգէր, որմէ վերջ ալ քանի մը, վայրկեան հետս խօսելով (կատարեալ Ֆրանսերէն) հետաքրքրուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ով: «Զուտ հայկական կազմակերպութիւն է: Խումբին մարզիկները բոլորը հա՞յ են: Ի՞նչ է ձեր միութեան կառուցը»: Ապա, հարցումները կեդրոնացուց Լիբանանի մարզական կեանքին եւ լիբանանահայութեան ընկերային-տնտեսական կենսամակարդակին վրայ: Անգամ մըն ալ ձեռնուելով հետս յաղորդութիւն եւ Թեհրանի մէջ հաճելի կեցութիւն մաղթեց մեզի:

«Արամանէ»ները ներկայացնելու մեծ պատիւը անչափելի



**Պատուիրակութեան անդամներն ու ֆութպոլիստները երանաշնորհ Արտակ Արք. Մանուկեանին շուրջ:**

ուրախութեամբ համակեց զիս այդ օր, յատկապէս անոր համար, որ Շահը խումբերու ներկայացուցիչներէն միայն ինծի հետ գրուցեց:

Այդ գիշեր, Թեհրանի հեռատեսիլը լրիւ սփռեց հանդիպումը, ու երբ երեկոյեան այցելեցի «Արարատ»ի կեդրոնը, շատեր ժպիտով մօտեցան ու շնորհակտեցին զիս բացառիկ հանդիպումին համար, եւ ոմանք ալ «մենք տարիներով հոս ենք, ո՛չ ձեռնուած ենք, ո՛չ ալ խօսած Շահին հետ» ըսելով արժեւորեցին պատմական այդ աննախադէպ եղելութիւնը:

Մրցաշարքի իրադարձութիւններուն եւ անոնց զուգահեռ կազմակերպուած ձեռնարկներուն արձագանգող յուշագրութիւններս կ'ուզեմ աւարտել Թեհրանի մէջ Լիբանանի դիւանագիտական ներկայացուցիչին՝ Ժորժ Խուրիին մասին վկայութեամբ մը, Ազգային Առաջնորդարան այցելութեանս, «Արարատ»ի դէմ մրցումին, հրաւէրի մը եւ ողջերթի ձեռնարկին, արձանագրելով բոլորին համար մեր անկեղծ երախտագիտութիւնը:

ա. Փրոթոքոլային այցելութիւններու շարքին այցելած էինք

լիբանանեան դեսպանատուն եւ ծանօթացած գործավարին: Վերջինը մրցաշարքի ընթացքին, յաճախ հեռաձայնելով, հետաքրքրուեցաւ մեր որպիսութեամբ եւ խնդակցեցաւ մեր յաղթանակներուն: Վերջին խօսակցութեան, այսինքն՝ երրորդութեան խաղի յաղթական գիշերը, հպարտութեամբ կապուելով մեզի յայտնեց, որ դեսպանատան բարեկամ անձնաւորութիւններ, շնորհակտեց են զինք եւ բարձր գնահատած խումբին նուաճումը: Աւելցուց, որ մեզ կը հրաւիրէ ճաշի մը, առ ի գնահատանք Հ.Մ.Ը.Մ.ի գեղեցիկ յաջողութեան: Մերժելու պատճառ չունէինք, ուստի նախատեսուած օրը, որոշուած ժամուն եղանք մեզի արդէն ծանօթ վայրը: Հոն գտանք նաեւ մեզի անծանօթ դէմքեր, որոնք ներկայացուցեցան իբրեւ լիբանանեան գաղութէն գործարար անձնաւորութիւններ:

Կերուխումի հաճելի ու լիբանանեան հարազատ միջնորդը տեսեց երկու ժամ, որմէ ետք Ժորժ Խուրիին բաժակ բարձրացուց կենացը խումբին, շեշտելով որ մեր մարզիկները լիբանանեան հայրենիքի վարկն ու անունը, ֆութպոլի մարզին մէջ, արժանացուցին փառքի ու պատիւի, եւ յայտնեց, որ դիւանագիտական ճամբով պէտք եղածը փոխանցած է Պէյրութ:

Մեր կողմէ արտասանուած յաւուր պատշաճի պատասխան-խօսքէն ետք, հրաժեշտի լիբանանեան ծէսով վերջ գտաւ դեսպանատան կոչունքը:

Չմոռնամ փակագիծի մէջ, որ յիշարժան այդ օրերուն Թեհրանի մէջ Մարոքի դեսպանը մեր խաղերուն միջտ ներկայ գտնուելէ ետք, երրորդութեան խաղին յաղթական աւարտին,



**Լիբանանեան դեսպանատան առջեւ, խումբն ու պատուիրակութեան անդամները դեսպանատան ընդհանուր գործավարին հետ:**

այցելեց մարզիկներու հանդերձարանը եւ իր սրտաբուխ շնորհակտութիւններն ու գնահատանքի ազնիւ արտայայտութիւնները մատուցանեց մարզիկներուն:

բ. Այցելութիւն Թեհրանի Կիլիկեան Թեմի Առաջնորդին

Հ.Մ.Ը.Մ.ի համար աւանդութիւն դարձած է, որ երբ խումբ մը մրցաշարքի, բանակումի կամ միութեանական այլ առաքելութեամբ մը կ'այցելէ գաղութ մը, անպայման անզանցառելի պարտականութիւն կը նկատէ ներկա-

յանալ տեղւոյն ազգային եկեղեցական բարձրագոյն իշխանաւորին: Այդ աւանդութեան հաւատարիմ, այցելեցինք մեզի ծանօթ (այժմ երանաշնորհ) Արտակ Մանուկեան Արքեպիսկոպոսին: Զերմ ու հաճելի տեսակցութեան մը աւարտին, Սրբազանը մտերմօրէն փափաք յայտնեց պատուիրակութեան հետ գիշեր մը սեղանակից ըլլալու եւ խոստացաւ օրը եւ տեղը ճշդելէ ետք, մեզ տեղեակ պահել: Հրաւէրը ընդունած էինք:



Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբի պաշտօնական լուսանկար:

Երկու օր ետք ան հաղորդեց նաեւ հանդիպումին օրն ու հասցէն, խնդրելով սակայն, որ նախ՝ Առաջնորդարան հանդիպինք, անկէ ուղղուելու համար հիւրասիրութեան վայրը:

Այդպէս ալ ըրինք, բայց Առաջնորդարանէն ետք, այլ տեղ մըն ալ հանգրուանելու առաջարկ ըրաւ Սրբազանը, եւ շարունակելով ճամբան, մենք մեզ գտանք իրեն բարեկամ հայ անձնաւորութեան մը տունը:

Ազգանունը՝ Լաչինեան, յոյն դերասան Թեյի Սաւալասը

յիշեցնող երեւոյթով հետաքրքրաշարժ տիպար մըն էր, որ կարծէք առանձնաբերակ կեանք մը ունէր...

Տեղի ունեցած խօսակցութիւններէն եզրակացուցինք, որ մեր նոր բարեկամը Մ. Նահանգներու դիւանագիտական ցանցին հետ առնչութիւն ունենալու էր...: Տպաւորութիւնը քիչ մը աւելի պիտի շեշտուէր, երբ մեզ առաջնորդեց Ամերիկեան Սպաներու յատուկ շքեղ ու բազմամբոխ ճաշարան մը, եւ իր ընթրիքի հիւ-

րը դարձանք այդ գիշեր:

Առանձնաշատուկ այդ միջավայրին մէջ, ազգային հարցերու եւ Լիբանանի քաղաքական կեանքին մասին խօսակցութիւններով արագօրէն սահած ժամերը պիտի մնան իւրայատուկ յուշ, շնորհակալ զգացումներով միշտ յիշեցնելով երջանկայիշատակ Արտակ Սրբազանը:

(Շար. 3)



Sarkis  
or  
Paul

# SASSOUNIAN INC.

## Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street  
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220  
(213) 627-1206  
Outside Ca: 1-800-544-4419  
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com      E-mail: info@sassouniantools.com

# Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.Ի ԼՈՌԻԻ ՄԻԱԴՈՐԸ

(Բ. ՄԱՍ)

## Թղթակից ԼՈՌԻ

**2**004ի Մարտի 8ին կազմակերպուել է գալլիկական միջոցառում նուիրուած՝ մայրուլթեան եւ գեղեցկութեան տօնին, որի ժամանակ գալլիկները իրենց մայրիկներին են նուիրել իրենց պատրաստած ձեռքի աշխատանքները:

Մարտի 10-17ը Վանաձորի միաւորի անդամներ Քրիստինէ Ղեւոնդեանը, Էտմոն Վարդանեանը, Իվետա Սահակեանը, Տաթև Մարգարեանը, Օքսաննա Մովսիսեանը, Յարութ Գալստեանը մասնակցել են USAIDի կողմից կազմակերպուած «Կազմակերպութեան զարգացում» սեմինարին:

Ապրիլ – Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Վանաձորի միաւորը Համաշխարհային Ուսուցում կազմակերպութեան եւ եւս հասարակական երկու այլ կազմակերպութիւնների հետ միատեղ իրականացրել է «Ակտիւ հասարակութեան առողջ եւ ուրախ մանուկներ» ծրագիրը:

Առաջին մաս՝ Համաքաղաքային աշակերտական խորհուրդ Հանդիպում է տեղի ունեցել Վանաձոր քաղաքի բոլոր դպրոցների տնօրէնութեան, այնուհետեւ աշակերտների հետ: Դպրոցների աշակերտական խորհուրդների նախագահներից ստեղծուել է համաքաղաքային աշակերտական խորհուրդ:

Երկրորդ մաս՝ Ապահով մանկութիւն կազմակերպուել է ձեռնարկ, որի շրջանակներում Վանաձորի միաւորի գրասենեակում հաւաքագրուել է օգտագործմանը պիտանի գրեթեական պիտոյքներ եւ հագուստ: Այդ ամէնը բաշխուել է անապահով ընտանիքների երեխաներին: Ձեռնարկը 20 օր շարունակ լուսաբանուել է հեռուստատեսու-



թեամբ եւ ռատիոյով, միաւորի անդամների կողմից մարդաշատ վայրերում փակցուել են յայտարարութիւններ:

Երրորդ մաս՝ Վանաձորն առանց դեռահաս ծխողների Տպագրուել են այդ թեմայով գրքոյկներ: Հանդիպումներ են կազմակերպուել դպրոցների աշակերտների հետ, բաժանուել են գրքոյկներ, հեռուստատեսութեամբ եւ ռատիոյով կազմակերպուել են ուղիղ եթերներ:

Ապրիլի 7ին կազմակերպուել է «Գեղեցկութեան Օր»ուան նուիրուած միջոցառում:

Ապրիլի 13ին նշուել է Սուրբ Զատիկի տօնը: Ապրիլի 18ին, «Հայ Սկսուտի Օր»ուան կապակցութեամբ, կազմակերպուել է ծառատունկ Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցու տարածքում. մասնակցել են միաւորի 25 սկսուտներ: Նոյն օրը երէցները մասնակցել են մարզային «Պրէյն ռիմգ»ի առաջնութեանը, գրաւելով առաջին տեղը:

Ապրիլի 24ին այցելել եւ ծաղիկներ են դրել Եղեւնի զոհերի յիշատակի խաչքարին:

Մայիսի 9- Հայրենական Մեծ Պատերազմի յաղթանակի եւ Շուշիի ազատագրման օրը կազմակերպուել է ծաղիկապսակներով երթ դէպի յուշարձան-կոթող:

Մայիսի 10-17ը միաւորի հինգ խմբապետներ մասնակցել են USAIDի կողմից կազմակերպուած դասաւանդողների վերապատրաստման դասընթացքին՝ ստանալով դասաւանդողի որակաւորում:

Մայիսի 21-23ը Երեւանի Պետական Համալսարանի Իջեւանի մասնաճիւղի շէնքում կայացած Բ. կարգի սեմինարին մասնակցեցին Վանաձորի 20 սկառտներ:

Յունիսի 5ին կազմակերպուել է արշաւ դէպի Մայմեխ լեռ: Յունիսի 13ին Վանաձորի միաւորի սկառտական խմբերի միջեւ կազմակերպուել է «Ուրախների եւ հնարամիտների սկոլմբ» խաղ-մրցոյթ:

Յուլիսի 23ից Օգոստոսի 1ը կազմակերպուել է միջ-միաւորային բանակում, որին մասնակցել են 80 սկառտներ, որոնցից 7ը՝ Ապարանի միաւորից:

Օգոստոսի 28-29ին կազմակերպուել է արշաւ-բանակում, որին մասնակցել են 37 սկառտներ:

Սեպտեմբերի 8-13ը Վանաձորի միաւորի ատենապետ եղբայր Շահէն Յարութիւնեանը մասնակցել է Հ.Հ. մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան կողմից կազմակերպուած երիտասարդական ուսուցողական դասընթացքին:

Սեպտեմբերի 21ին կազմակերպուել է անկախութեան օրւան եւ Վանաձորի միաւորի հիմնադրման 9ամեակին նուիրւած արշաւ՝ դէպի Արագածի հարաւային գագաթը:

**ԱՄԵՆ ՏԱՐԻ ԱՄՆԴԱԲԱՐ**

Միաւորը մարզի տարածքում իրականացնում է ծառատունկ եւ բնութեան մաքրման աշխատանքներ:

Հիմնադրման օրուանից մինչ օրս, որպէս կանոն, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Վանաձորի միաւորը մասնակցում է քաղաքի եւ հանրապետութեան մակարդակի իրականացուող բոլոր սօնակատարութիւններին եւ յիշատակման արարողութիւններին:

Կազմակերպուում է Ամանորի միջոցառում:

Ապրիլի 18ին նշուում է «Հայ Սկառտի Օր»ը:

**ԸՎԱՍԾ ԳՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**

2001 Սեպտեմբեր - 2002 Սեպտեմբեր- Միաւորն իրականացրել է փախստականների համարկումի «Բարձրացիր-բարձրացրո՛ւ» դրամաշնորհային ծրագիրը, որը Ֆինանսաւորուել է Համաշխարհային Ուսուցում կազմակերպութեան կողմից:

2003 Յունիս - Օգոստոս- Counterpart International կազ-

մակերպութեան տրամադրած դրամաշնորհով իրականացրել է «Մանկական խաղահրապարակ» ծրագիրը:

2003 Նոյեմբեր- Եւրոխորհրդի յայտարարած դրամաշնորհային մրցոյթում շահել է միաւորի ներկայացրած «Օգնենք թոշակառուներին» ծրագիրը:

Բազմիցս կազմակերպուել են գայլիկական եւ սկառտական արշաւներ:

Վանաձորի սկառտները մասնակցում են համահայաստանեան եւ քաղաքային գրեթէ բոլոր միջոցառումներին, որոնցից մի մասը կազմակերպուում է Վանաձորի միաւորի կողմից: Դրանք պարբերաբար լուսաբանուում են ինչպէս տեղական, այնպէս էլ ազգային հեռուստատեսութեամբ, ռատիոյով եւ մամուլով:

Վանաձորի միաւորի գործունէութեան մասին բազմիցս տպագրուել է միութեանական պաշտօնաթերթ «Մարզիկ»ում:

Վանաձորի միաւորը ներկայումս ունի գայլիկական, աստիճանաւորական եւ երէցական խորհուրդներ: Ներկայումս Վանաձորի միաւորում գործում են սկառտական երկու (70 անդամ), երէցական մէկ (22 անդամ) եւ գայլիկական երկու (38 անդամ) խմբեր:

Վանաձորի միաւորի վարչութիւնը չունի սկոլմբ, գրասենեակ եւ գրասենեակային գոյք, այն ժամանակաւորապէս գործում է թատերական 6 հասցեցում: Միաւորն ունի մէկ «Pentium 1» համակարգիչ: Խմբերը չունեն հիմնական հաւաքատեղի, սկառտական գործունէութիւններն իրականացուում են դպրոցների դասասենեակներում կամ ժամանակաւոր գրասենեակում, որը դժուարացնում է աշխատանքները: Միաւորի անդամների մեծամասնութիւնը տարազաւորուած է:

Չնայած վերը նշուած այն միջոցառումներին, որոնք կազմակերպուում են ներկազմակերպական ուժերով, այնուամենայնիւ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Վանաձորի միաւորի քոյրերն ու եղբայրները կարիքը ունեն Հ.Մ.Ը.Մ.ի այլ շրջանների սկառտներին հետ փորձի փոխանակման, իրենց գործնական եւ տեսական գիտելիքների պաշարն էլ աւելի հարստացնելու համար:

Միաւորը չունի նաեւ սկառտական գոյք՝ վրաններ, քնապարկեր, որոնք բաւականին խոչընդոտում են միաւորի աշխատանքները:

Միաւորի վարչութիւնը լայն հնարաւորութիւն ունի ծաւալուելու եւ անդամների թիւը քառապատկելու, սակայն սահմանափակ նիւթական միջոցները եւ կամ դրանց ի սպառ բացակայութիւնը լուրջ խոչընդոտ են աշխատանքները յաւուր պատշաճի կազմակերպելու համար:





## ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԿՐՆԱՐՆ ԱՒԵԼԻ ԱՐԱԳ, ԱՒԵԼԻ ԲԱՐՁՐ ԵՒ ԱՒԵԼԻ ՈՒԺԵՂ ԴԱՌՆԱԼ

Ս.Ա.  
ՊԷՅՐՈՒԹ

Անցնող ամառ, 2012ի ողիմպիական խաղերու վայրին որոշումը մեծ խանգավառություն ստեղծեց Լոնտոնի մէջ, իսկ մեծ յուսախաբուծիւն՝ Փարիզի, Մատրիտի, Նիւ Եորքի եւ Մոսկուայի մէջ:

Սակայն, ներկայ պայմաններուն մէջ, կարելի է հարց տալ, թէ 7 տարիէն, նոյնիսկ 3 տարիէն՝ 2008ի ողիմպիականին, մարզիկները պիտի կարենա՞ն «աւելի արագ, աւելի բարձր, աւելի ուժեղ» ըլլալ:

Արդեօք անոնք իրենց առաւելագոյն սահմաններուն հասած չե՞ն կամ գէթ՝ հասնելու ընթացքին մէջ չե՞ն արդէն:

Սերունդներէ ի վեր, խաղերը դիտող հարիւր հազարաւոր մարզասէրներ հմայած են իրենց հերոսներով, որոնք առաւելագոյնի սահմանները հետզհետէ աւելի ու աւելի հեռու մղած են՝ գերմարդկային ճիգեր ի գործ դնելով:

Օգոստոս 2004ին, Սթոքհոլմի մէջ տեղի ունեցած «Յելլո-սայընս օփըն» ֆորումին, մարզական բնախօսութեան մարզի հետազոտողներ յայտնեցին, թէ լաւագոյն



մարզիկները մարդկային ֆիզիքական կարելիութեանց առաւելագոյնի սահմաններուն հասնելու մօտեցած են, եթէ...«խթանիչ նիւթերը նկատի չառնուին»:

Բրիտանիոյ Նոթինկհէմ համալսարանի բնախօսութեան մասնագէտներէն Մայքըլ Ռինի տուած մուրճի, սկաւառակի արձակման խաղերուն օրինակը, ըսելով, թէ նման մրցումներու պարագային, մարզիկները կրնան արդէն հասած ըլլալ մարմնի ամբողջական կարելիութեան:

Ան դիտել տուաւ, որ 1989էն ի վեր աշխարհի մրցանիչներուն մէջ գրեթէ փոփոխութիւն չէ արձանագրուած: «Այդ մարզանքները մկանային մեծ ծաւալի պէտք ունին, հաւանական է, որ այ-

սորուան մարզիկները իրենց լաւագոյն ուժ-ծանրութեան համեմատութեան հասած են», ըսաւ ան:

Պէնկլիթ Սոլթին, որ Քոփենհագընի Մկանային Հետազոտութեանց Կեդրոնին կարեւոր մասնագէտներէն է, համամիտ գտնուեցաւ Ռինիի, սակայն ըսաւ, թէ իր կարծիքով լոյի եւ վազքի նման մրցումներ տակաւին կրնան յառաջիկայ 15 տարիներուն համաշխարհային մրցանիչները 10 առ հարիւրով բարելաւել:

Մարաթոն վազողները ապագային պիտի կարենան վայրկեաններ կրճատել ներկայիս իրենց արձանագրած Ժամանակէն, եթէ սորվին խնայել իրենց թեքնիքը եւ առաւելագոյնի հասցնել

իրենց շնչառական կարողանականութիւնը, յայտնեց Սոլթին:

Մարզական առաջնակարգ դիրքերու հասնիլը հետզհետէ գիտական աւելի ճիգ ու աշխատանք կ'ենթադրէ: Մարզիկներ մանրակրկիտ կերպով կը հսկեն մարզումի իրենց թեքնիքներուն եւ սննդականոնին, սերտօրէն աշխատելով գիտաշխատանոցներու մէջ՝ բնախօսներու հետ, իրենց ուժը առաւելագոյնի հասցնելու համար, կարգ մը պարագաներու՝ խթանիչ նիւթեր գործածելով:

Սոլթինի համաձայն, սակայն, մարզիկներ տակաւին «երկար ճամբայ ունին կտրելիք»:

«Կը մօտենանք մարզուելու լաւագոյն թեքնիքներուն: Կը պակսի մարզուելու եւ սննդականոնի միջեւ լաւագոյն կապ-օգուտը գտնելը», կ'ըսէ ան:

Շուէտի Քարոլինսքա հիմնարկին մասնագէտներէն Լենըրթ Քայսըր դիտել կու տայ, որ ներկայիս լաւագոյն մարզիկները կու գան արեւմտեան եւ արեւելեան երկրներէ: Ան կը նախատեսէ, որ ապագային մարզիկները «աւելի լայն խմբակներէ, ներառեալ՝ միլիառաւոր չիններէ» ընտրուին: Փեքին պիտի հիւրընկալէ 2008ի ողիմպիական խաղերը:



**ԲԱՐԵԼԱՌՈՒՄԸ  
ՊԱՐՉԱՊԷՍ  
ԴԱՆԳԱԳԱԾ**

Բրիտանացի մասնագետ տոքթ-կրէկ Ուայթ, որ Անգլիական Մարզական Հիմնարկին գիտութեանց եւ հետազոտութեանց տնօրէնն է, կ'ըսէ, թէ մարզական գիտութեանց եւ բժշկական գիտութեան մարզերուն մէջ յառաջդիմութիւնները կը նշանակեն, թէ մարզիկներ կրնան տակաւին կարելիութիւնները իրենց բարելաւել:

«Եթէ ձիրքերու աւելի մեծ ընտրանք ունենանք, ապա անխուսափելիօրէն բարելաւումը առաւելագոյն սահմանի մը պիտի հասնի: Սակայն տակաւին հոն չենք», կ'ըսէ ան:

«Բարելաւման ընթացքը զանդաղած է, սակայն ցարգ-գազաթնակէտին չենք հա-

սած», կը յայտնէ ան, աւելցընելով, որ պէտք է նկատի առնել բնախօսական, կենսամեքենական, արհեստագիտական եւ հոգեբանական տարբեր ազդակներ:

«Ըսել, որ գազաթնակէտին հասած ենք կը նշանակէ, թէ այդ բոլոր մարզերուն մէջ առաւելագոյնին հասած ենք, ինչ որ ճիշդ չէ», կը յայտնէ ան:

Բրիտանիոյ մէջ, Սիտնիի 2000ի խաղերէն ետք, զարկ տրուած է մարզական գիտութեանց եւ բժշկագիտական ենթակառուցներուն՝ ընտրանի մարզիկներուն յատկացուած գորակցութիւնը բարելաւելու համար:

Անգլիական Մարզական Հիմնարկը (Ի.Ա.Ե.Ս.), որ մարզական աշխարհին մէջ մասնագէտներու ցանց մըն

է, 2003ին միացած է Բրիտանական Ողիմպիական Ընկերակցութեան բժշկական կեդրոնին, կազմելով Ողիմպիական Բժշկական Հիմնարկը (Օ.Է.Մ.Ա.Ե.):

Իբրեւ արդիւնք, «ունինք բազմատեսակ մասնագէտներէ բաղկացած խմբակ մը, որ կրնայ առաւելագոյն չափով օգտակար ըլլալ մարզական աստղերուն, ըստ Օ.Է.Մ.Ա.Ե.ի ընդհանուր տնօրէն Նիք Ֆելդզի:

Հիմնարկին մէջ տեղի կ'ունենան նաեւ հետազոտական կարգ մը աշխատանքներ, բարելաւելու համար անոնց կարելիութիւնները:

(Օգտագործուած աղբիւրներ՝ «Պի.Պի.Սի.», «Ա.Ֆ.Փ»)



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Reservations** Yerevan  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# ԱՆՏԱՌՆԵՐՈՒ ՓՈԱՅՈՒՄԸ

Ալին Ձեյթունյան  
ՊԷՅՐՈՒԹ

**Ե**րկրագունդի ցամաքային մասերը մեծ մասամբ ծածկուած են տարբեր տեսակի կանաչութեամբ, որոնց կարգին՝ անտառներով: Անտառները կը պարունակեն այլազան ծառեր եւ կը կազմեն միայն շատ փոքր մէկ տոկոսը երկրի ցամաքին:

Ծառերը լուսհամադրութեան (photosynthesis) ճամբով օդէն կը շնչեն երկթթուածին բնածուխը (CO<sub>2</sub>) եւ դուրս կու տան թթուածինը, իսկ մարդիկ ալ՝ հակառակը:

Ճարտարարուեստական յեղափոխութենէն սկսեալ, փայտի պահանջը օրըստօրէ աւելցած է, թէ՛ շինարարութեան համար եւ թէ՛ իբրեւ վառելանիւթ: Այս պահանջներուն կողքին, հողամշակումի եւ ագարակներու համար աւելի արտեր ապահովելու պահանջը եւս աւելցած է, որուն հետեւանքով ներկայիս երկրագունդի անտառները սկսած են պակսիլ:

Անտառներու փճացումը պատճառ կը դառնայ, որ օդէն երկթթուածին բնածուխը գտող միջոցները պակսին: Իսկ երբեմն ալ, մարդոց նոր բնակավայրեր ապահովելու համար անտառները այրելը պատճառ կը դառնայ, որ մեծ քանակով ծուխ արձակուի մթնոլորտին մէջ եւ, հետեւաբար, երկթթուածին բնածուխին քանակը կ'աւելնայ օդին մէջ: Ծառերու թիւին նօսրացումը եւ ծուխին աւելնալը պատճառ կը դառնան ընդհանրական ջերմացումի բարձրացման:

### ՀԱՐՅԸ





Անտառներու փճացումը շատ մտահոգեցուցիչ երեւոյթ է: Անտառները երկթթուածին բնածուխին քանակը ցած կը պահեն եւ թթուածինը կ'աւելցնեն: Որքան ծառերը աւելի շատ ըլլան՝ այնքան

մթնոլորտը աւելի առողջ կ'ըլլայ:

Հետեւաբար, ծառեր կտրելը եւ այրելը վտանգաւոր ազդեցութիւն ունի միջավայրին վրայ:

Ծառերը միակը չեն որ մթնոլորտին վրայ կ'ազդեն: Ծառերու արմատները, իրենց կարգին, կը նըպաստեն հողի պահպանման եւ ջուրի աւազաններու մակարդակը ցած պահելու: Երբ ծառերը կտրեն, հողը շատ դիւրութեամբ կը մաշի հովէն եւ ջուրէն, իսկ ջուրի աւազանները կը բարձրանան՝ իրենց հետ բարձրացնելով աղի մակարդակը: Հիմնական խոչընդոտներէն մէկը անտառներու փճացման արգիլումն է: Պէտք է համոզել անտառային մեծ տարածութեամբ երկիրներու կառավարութիւնները, որպէսզի դադարեցնեն կամ պակսեցնեն անտառներու փճացումը: Պէտք է ուշադրութիւն դարձնել անտառներու կարելորութեան: Այսպէս, արեւադարձային անտառները յատկապէս կը պարունակեն երկրա-





գունդի բոյսերու եւ կենդանիներու 50 առ հարիւրը: Անոնք կը պարունակեն դեղերու բաղադրիչ նիւթեր եւ թերեւս ալ՝ ապագայի դեղեր:

Թէեւ երկար ժամանակի կը կարօտի մարդոց համոզելը, որ դադրին ընել բան մը, գոր նիւթական շահ կ'ապահովէ իրենց:

Նորոգում կամ դարմանում

Իւրաքանչիւր անհատ դեր մը ունի: Յստակ է, որ անտառները պահած են: Շատ դիւրին է արդի գործիքներով քանի մը վայրկեանի մէջ ծառեր փճացնել: Ծառեր, որոնք հարիւրաւոր տարիներու ընթացքին աճած են: Հետեւաբար, փոխարինելու համար կտրուած ծառերը՝ նորերու մէջտեղ գալը տարիներ կը պահանջէ:

Հարկ է միլիոնաւոր նոր ծառեր տնկել: Տնկելը պէտք է ըլլայ մեծ տարածքի վրայ՝ հողամշակումի եւ անտառային շրջաններու մէջ: Աշխատանքը պէտք է համադրուի կառավարութեան, կենսոլորտի հարցերով զբաղող յանձնախումբերու եւ ճարտարարուեստի մարմիններու հետ, որպէսզի արդիւնաւոր ըլլայ:

Անհատական մակարդակի վրայ, անձ մը այս աշխատանքին կը նպաստէ իր տան, վարժարանին, ակումբին կամ գործատեղիին շուրջ ծառեր տնկելով:

### ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Անտառներու փճացումը կենսոլորտի մեծագոյն հարցերէն մէկն է: Վերջին 200 տարիներուն այս հարցին ստեղծման գլխաւոր պատասխանը ճարտարարուեստի մեծ երկիրներն են:

Լուծումները երկու ձեւի են՝ արգելում եւ նորոգում կամ դարմանում:

Արգելում

Առաջին հերթին պէտք է արգելիլ նոր անտառներ փճացնելը: Թէեւ անկարելի է ամբողջովին արգելելը:

Ժողովուրդը պէտք է դաստիարակել անտառներու փճացման վտանգներուն մասին բացատրութիւններ տալով:



*Philippe Photo Trade*

# Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

**EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION**

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.  
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria  
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

*Philippe Photo Trade*

**Assadourian Bros.**



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

Թղթակից  
ՈՒՈԹԸՐԹԱՌՆ

**24** Յունիսին 6 Յուլիս 2005, Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Միացեալ Նահանգներու շրջանը պատրին ու ուրախութիւնը ունեցաւ հիւրընկալելու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, որ շրջան այցելեց կազմակերպչական առաքելութեամբ՝ մօտէն ծանօթանալու համար տեղւոյն Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու աշխատանքներուն, ինչպէս նաեւ՝ ներկայ գտնուելու համար շրջանի տարեկան միջ-մասնաճիւղային խաղերուն:

Եղբ. Մկրտիչեան Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Միացեալ Նահանգներու շրջան իր այցելութիւնը սկսաւ հարաւային Ֆլորիտայի մասնաճիւղէն: Իրեն ընկերացաւ շրջանէն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ եղբ. Վահրամ Դանիէլեան: Այցելութիւնները ընդգրկեցին Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ ձըրզիի, Պոսթընի, Փրովիտընսի եւ Ուաշինկթընի մասնաճիւղերը: Նիւ



Ուաշինկթընի մէջ Հայաստանի դեսպանին հետ: Զախէն աջ՝ Հ.Յ.Գ. Բիրոյի անդամ Կարօ Արմէնեան, եղբ. Գառնիկ Մկրտիչեան, դեսպան Թաթուլ Մարգարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Գանիէլեան եւ Արամ Համբարեան:

Եորքի մասնաճիւղի վարչականները ներկայ գտնուեցան Նիւ ձըրզիի հանդիպումին, իսկ Ալպընի մասնաճիւղի վարչականները՝ Փրովիտընսի հանդիպումին: Այցելութիւններուն ընթացքին, Կեդրոնական Վարչութեան ատենապետը ծանօթացաւ շրջանի անդամ-անդամուհիներուն, մարզիկ-մարզիկուհիներուն եւ սկաուտական շարքերուն:



Ուաշինկթընի մէջ, եղբ. Մկրտիչեան այցելեց Հայ Դատի գրասենեակ, ուր տեսակցեցաւ գրասենեակի պատասխանատու Արամ Համբարեանի եւ Հ.Յ.Գ. Բիրոյի անդամ Կարօ Արմէնեանի հետ: Հանդիպում մըն ալ ան ունեցաւ Հայաստանի դեսպան Թաթուլ Մարգարեանի հետ: Պոսթընի մէջ, ան այցելեց «Հայրենիք»ի շէնք, ուր հարցազրոյցի մը ընդմէջ-

Յիշատակի Գլար՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրի սերունդի անդամներէն Տիգրան Ա. Քրնյ. Խոյեանի շիրիմին շուրջ:

ջէն «Հայրենիք» շաբաթաթերթի ընթերցողներուն եւ ռատիոկայանի ունկնդիրներուն տեղեկութիւններ փոխանցեց Հ.Մ.Լ.Մ.ի նուաճումներուն, դժուարութիւններուն եւ ծրարագիրներուն մասին: Նիւ Եորքի մէջ, եղբ. Մկրտիչեան այցելեց տեղւոյն Ազգային Առաջնորդարանը եւ տեսակցութիւն մը ունեցաւ շրջանի Առաջնորդ Օշական Արք. Զոյրոյեանի հետ:



Ուաշինգթոնի ակումբին մէջ:

Եղբ. Մկրտիչեանի շրջան այցելութեան կարեւոր մէկ բաժինն ալ յատկացուեցաւ միջ-մասնաճիւղային 15րդ մարզախաղերուն, որոնք տեղի ունեցան 1-4 Յուլիս 2005, Ֆիլատելֆիոյ մէջ: Խաղերուն ընթացքին, ան առիթը ունեցաւ մօտէն ծանօթանալու Հ.Մ.Լ.Մ.ի Տիթրոյթի, Շիքակոյի եւ Ֆիլատելֆիոյ մասնաճիւղերու վարչականներուն հետ:

Եղբ. Մկրտիչեան իր պատգամը փոխանցեց մարզախաղերու ճաշկերոյթ-պարահանդէսին եւ փակման հանդիսութեան:

Եղբոր բոլոր այցելութիւնները եղան Հ.Մ.Լ.Մ.ական ոգիով լեցուն միջնորդարի մէջ: Ամէնուրեք ան շեշտեց, որ Հ.Մ.Լ.Մ.ը պէտք չէ շեղի գաղափարական մարդ պատրաստե-

լու իր առաքելութենէն: Մարգական եւ սկառտական ճիւղերով օժտուած Հ.Մ.Լ.Մ.ը պէտք է գործէ՝ նպատակ ունենալով եղբայրական ոգիի արմատացումը: Եղբայրը նաեւ դիտել տուաւ, որ Հ.Մ.Լ.Մ.ականի մը համար շատ կարեւոր է հայ լեզուի գործածութիւնը, խօսելու եւ արտայայտուելու կարողութեան պահպանումը: Հ.Մ.Լ.Մ.ը անդամակցութեան կամ տարիքի

խտրութիւն չունի: Հ.Մ.Լ.Մ.ի մէջ կարելի է հանդիպիլ մեծ հօր, հօր եւ թոռնիկին: Բոլորն ալ նոյն ժամանակ կրնան անդամակցիլ անոր: Յատկապէս օտար ափերուն, Հ.Մ.Լ.Մ.ը ապահովագրութիւն է ընդդէմ այլասերումի եւ ուժացումի:


Վերջապէս, եղբ. Մկրտիչեան իր խօսքերուն մէջ նշեց, որ դժուար պայմաններու մէջ մեզի փոխանցուած է Հ.Մ.Լ.Մ.ի դրօշին եւ Եռագոյնին հաւատարմութիւնը: Մեր պարտականութիւնն է այդ դրօշներուն հաւատարմութիւնը փոխանցել նոր սերունդին եւ ճիգ ու ջանք չխնայել մեր առաքելութեան մէջ յաջողելու համար:

# FREDDY KARAGEUZIAN

## "ONNIG OF CAIRO"

### Egyptian Museum

## Tahrir Square - Cairo





Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: [freddy@gega.net](mailto:freddy@gega.net)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ 15ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑԱՆ ՖԻԼԱՏԵԼՖԻՈՅ ՄԷՉ

ՖՈՒԹՊՈՒԼԻ, ՎՈՒԽՊՈՒԼԻ, ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ, ԹԵՆԻՍԻ, ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԵՒ ԱԹԼԵԹԻԶՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԽՄԲԵՑԻՆ 750Է ԱԻԵԼԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՇՐՋԱՆԻ 9 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԷՆ, ՆԱԵՒ ՀԻՒՐԱԲԱՐ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ ԵՒ ՄՈՆԹՐԷՍԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԷՆ

## Թղթակից ՖԻԼԱՏԵԼՖԻՍ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Արևելեան Միացեալ Նահանգներու միջ-մասնաճիւղային 15րդ մարզախաղերը 1-4 Յուլիս 2005ին տեղի ունեցան Ֆիլատելֆիոյ մէջ, նախաձեռնութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի տեղւոյն Շրջանային Վարչութեան, հովանաւորութեամբ՝ Արևելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեանի եւ հիւրընկալութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆիլատելֆիոյ մասնաճիւղին:

Միջ-մասնաճիւղային այս մարզախաղերը մարզիկներուն առիթը կու տան, որ տարին անգամ մը հաւաքուին միութենական նոյն երգիքի տակ, մրցելու ազնիւ ոգիով, խանդավառ մթնոլորտի մը մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական հայաբոյր միջավայրի մէջ: Այս տարուան մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին շրջանի 9 մասնաճիւղերը: Նիւ Եորք, Նիւ Ճրքի, Շիքակօ, Ուաշինկթըն, Պոսթըն,



Տիթրոյթ, Փրովիտրնս, Ֆիլատելֆիա, Հարաւային Ֆլորիտա: Հիւրաբար մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանէն Թորոնթոյի եւ Մոնթրէալի մասնաճիւղերը:

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԲԱՏՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ**

Մարզախաղերուն բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ 1 Յուլիսի առաւօտեան ժամը 9ին, «Հէվլըֆորտ» քոլէճի դաշտին վրայ: Բոլոր մասնաճիւղերու մարզիկները շարուեցան դաշտին վրայ, ուր մուտք գործեցին դրօշակիրները եւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիլատելֆիոյ սկաուտական շարքերը: Յաջորդաբար



երգուեցան Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները: Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան բացման իր խօսքին մէջ բարի դալուստ մաղթեց մարզիկներուն եւ մթնոլորտը խանդավառեց քաջալերական խօսքերով:

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԵՒ ՄԱՍՆԱԿԻՑ ԽՈՒՄԲԵՐԸ**

Նոյն դաշտին վրայ ամբլեթիզմի խաղերը սկսան առաւօտեան ժամը 10ին: Խմբային խաղերուն ազդանշանը տրուեցաւ յետմիջօրէի ժամը 3ին, նոյն համալսարանի մարզադաշտերուն վրայ: Մօտաւորապէս 750 մարզիկ-մարզիկուհիներ, ծիւ, փոքր, կըրտսներ, երէց եւ վեթերան դասակարգերով իրենց մասնակցութիւնը բերին Ֆուլթոնի (17 խումբ), վոլիպոլի (8 խումբ) եւ պասքեթպոլի (51 խումբ) 105 խաղերու:

Միաժամանակ տեղի ունեցան անհատական մարզախաղեր, որոնց իրենց մասնակցութիւնը բերին թենիսի 29, փինկփոնկի 57 եւ ամբլեթիզմի 300 մարզիկուհիներ: Բոլորը կըրակոտ աչքերով, մարզական բարձր ոգիով իրենց

Jewelry Burs from FOX! All shapes, all sizes!  
Here are just a few!



2245 E. Colorado Blvd. 104-240  
Pasadena, CA 91107 USA  
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN  
Tel: 626-791-4327  
Fax: 626-791-0866

The Diamonds' Choice



մրցումները կատարեցին մինչև 4 Յուլիս, վայելելով Հ.Մ.Ը.Մ-ի Ֆիլատելիոյ մասնաճիւղին սրտբաց հիւրասիրութիւնը:

**ՀԻՐԸՆԿԱԼ ՄԱՆԱՃԻՂԻՆ ՀԻՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՐ**

Յուլիս 2ի երեկոյեան, հիւրընկալ Ֆիլատելիոյ մասնաճիւղին վարչութիւնը հիւրասիրութիւն մը կազմակերպեց՝ ի պատիւ 11 մասնաճիւղերու պատասխանատուներուն: Այս առիթով խօսքեր արտասանեցին Շրջանային Վարչութեան անդամ, մարզականի պատասխանատու եղբ. Բաֆֆի Տօնապետեան եւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան: Առաջինը յիշեցուց մարզախաղերուն օրէնքները, իսկ երկրորդը շնորհեց Հ.Մ.Ը.Մ-ական ոգիի տիրապետութեան անհրաժեշտութիւնը:

**ԻՆՏԳՐԱՎԱՌ ԵՐԵԿՈՐՆԵՐԸ**

Նոյն օրը, երեկոյեան, տեղի ունեցաւ երիտասարդական խրախճանք: Յաջորդ օր կատարուեցաւ պարահանդէս, ընկերակցութեամբ՝ երգիչ Արամ Ասատրեանի:

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԸՆԾԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԳԵՍԸ**

Մարզախաղերուն նախափերջին օրը,



Պաքերթալոյի երէց տղոց ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ-ի Նիւ Եորքի խումբը:

3 Յուլիսի երեկոյեան, «Հիլթըն» պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ մարզախաղերուն յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը, որուն ներկայ եղան աւելի քան 800 Հ.Մ.Ը.Մ-ականներ եւ համակիրներ: Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին ուրախութիւնը բաժնեցին, պատուոյ սեղանին վրայ, Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Արեւելեան

շրջանի ներկայացուցիչ եղբ. Վահրամ Դանիէլեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան, Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Տիրան Շահինեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆիլատելիոյ մասնաճիւղի ատենապետուհի քոյր Էլիզապէթ Տրամկոչեան: Պատուոյ հիւրերու շարքին էին նաեւ Ֆիլատելիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Ներսէս Քհնյ. Մանուկեան, ՀՕՄի Արեւելեան շրջանի ներկայացուցիչ Նայիրի Պալանեան եւ Համագրայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Հրանդ Ճիլոզեան: Շրջանային Վարչութեան սեղանին ներկայ էին փոխ ատենապետ եղբ. Սարգիս Տուտազեան, գանձապահ եղբ. Զարեհ Յարութիւնեան, քարտուղար եղբ. Յակոբ Խաչատուրեան, մարզականի պատասխանատու եղբ. Բաֆֆի Տօնապետեան, սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Վազգէն Գաբրիէլեան, եղբայրներ Վարդգէս Վարդանեան, Գէորգ Վիշապեան եւ Վազգէն Լախոյեան: Մարզախաղերու կազմակերպիչ մարմիններէն ներկայ էին Շրջանային մարզական յանձնախումբի անդամ եղբայրներ Արամ Կաւուր, Բաֆֆի Գրիգորեան եւ Գօգօ Մաթիկեան:

Ճաշէն առաջ, յայտագրին պաշտօնական բաժինը բացուած յայտարարուեցաւ Ֆիլատելիոյ մասնաճիւղի



Պոսթընի եւ Ուաշինկթընի մասնաճիւղերու կրտսեր մարզիկներ:

ատենապետուհի քոյր էլիզապեթ Տրամ-կոչեանի կողմէ: Քոյրը բարի գալուստ մաղթեց բոլորին եւ շնորհակալութիւն յայտնեց մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբերուն ու բոլոր անոնց, որոնք անսակարկ աշխատեցան ի սէր Հ.Մ.Ը.Մ.ի:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Ճաշկերոյթին առաջին խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր՝ Հ.Մ.Ը.Մ.ին իր յարատեւ քաջախիղճութեամբ: Ապա, դնահատանքի խօսք ուղղեց հիւրընկալ Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի վարչութեան եւ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին՝ իրենց տարած աշխատանքին համար: Եղբայրը դրուատիքով անդրադարձաւ նաեւ շրջանի 10 մասնաճիւղերու վարչութիւններուն, որոնք

հսկայական աշխատանք կը տանին՝ շարունակելով միութեան հիմնադիրներուն գործը:

Եղբ. Գարեան ջերմ մաղթանքներ յղեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի մասնաճիւղերուն եւ յայտնեց, որ այս տարուան մարզախաղերը կոտրեցին զանազան չափանիշներ: «Կրնաք երեւեկայել, որ այս տարի 750է մասնակցեցան, 105է աւելի խմբային խաղեր խաղցուեցան եւ այս շաբաթավերջին 1000է աւելի հայորդիներ կը գտնուին այս պանդոկին մէջ, - նշեց եղբ. Գարեան ու աւելցուց, - Հ.Մ.Ը.Մ.ը





Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան բացման հանդիսութեան կ'արտասանէ իր խօսքը:

մարմնակրթութենէ գտտ հայ երիտասարդին կու տայ ազգային դաստիարակութիւն, մարդկային արժէքներու գիտութիւն, հայապահպանման եւ Հ.Մ.Ը.Մ.ի իտեալներով լեցուն հայորդիներ»:

**With the compliments of**

**Restaurant Al-Mayass**



Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսին խօսքեր կ'արտասանեն Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի ատենապետուհի քոյր Էլիզապէթ Տրամկոչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեան:

Այնուհետեւ, եղբ. Գարեան իր խօսքը եզրափակեց ըսելով, թէ Հ.Մ.Ը.Մ.ը բոլորին աջակցութեան կը կարօտի, եկէք եւ միասին աշխատինք՝ ի խնդիր նոր սերունդի հայապահպանման վեհ գործին:

**ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Յաջորդ խօսքը արտասանեց մարգախաղերուն համար Պէյրուսէն յատկապէս հրաւիրուած, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Իր խօսքին սկիզբը, եղբ. Մկրտիչեան ողջունեց մարգախաղերուն կազմակերպումը եւ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու միջմասնաճիւղային մարգախաղերը 15 տարիէ ազգային հպարտութեան, հաւաքական հրճուանքի եւ մարգական յաղթանակի օրեր են, ո՛չ միայն այս շրջանին, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ըմտանիքը բաղկացնող 95 մասնաճիւղերուն համար:

«Կը բաւէ պահ մը պատկերացնել կազմակերպչական այն հսկայական աշխատանքը, որ անհրաժեշտ է շրջանի 10 մասնաճիւղերէն բազմահարիւր մարզիկներ մեկտեղելու ֆուրպոլի, պասքեթպոլի, թե-

նիսի, փինկ-փոնկի եւ աթլետիզմի տասնեակներով մրցումներ կատարելու, երիտասարդական երեկոյ, յաղթանակի պարահանդէս եւ փակման հանդիսութիւն կազմակերպելու համար, եւ այն ատեն միայն ըմբռնելի կը դառնայ տարողութիւնը այն մեծ գործին, գոր այս շրջանը 1990էն ի վեր կը կատարէ՝ տարուէ տարի աւելի մեծ մասնակցութեամբ եւ բծախնդիր պատրաստութեամբ»:

**Կեդրոնական Վարչութեան ատենապետ**

պետ եղբայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի կապուած յոյսերուն եւ ըսաւ. «Այսպէս, ուրեմն, Հ.Մ.Ը.Մ.ի նոր սերունդը կեանքով, խանդավառութեամբ եւ յոյսերով կը լեցնէ հայ իրականութիւնը ամէն տեղ, մէկ կողմէ մեր կեանքի ընկրկումներուն եւ թերութիւններուն հակադրելով իր տեւական կենսունակութիւնը, իսկ միւս կողմէ՝ հաստատ երաշխիքը տալով այն խոստումին, թէ ինք մի՛շտ պատրաստ է իր դերին ու կոչումին հաւատարմութեամբ՝ բարձրանալու եւ իրմով հպարտացող հայութիւնն ալ իր հետ բարձրացնելու»:

**ՄԱՍՆԱՃԻՒԼԵՐՈՒ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՍԱՒՈՐՈՒՄԸ**

	Ա.	Բ.	Գ.	Կէտ
ՊՈՍԹԸՆ	3	4	2	49
ՖԻԼԱՏԵԼՖԻԱ	3	1	2	34
ՈՒԱՇԻՆԿԹԸՆ	3	0	1	25
ՏԻԹՐՈՅԹ	1	1	3	24
ՇԻՔԱԿՕ	1	2	1	21
ՆԻԻ ԵՈՐՔ	1	2	1	21
ՓՐՈՎԻՏԸՆՍ	2	1	0	19
ՆԻԻ ՃԸՐՁԻ	0	2	0	10
ՖԼՈՐԻՏԱ	0	0	0	0
ԱԼՊԸՆԻ	0	0	0	0

**ՄԱՍՁՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔԸ**

Այնուհետեւ, հայրական իր պատգամը փոխանցեց Արեւելեան Միացեալ Նահանգներու թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեան:

Սրբազանը իր խօսքը ներկայ երիտասարդութեան ուղղելով շնորհաւորեց միջ-մասնաճիւղային 15րդ մարգախաղերուն յաջողութիւնը եւ յիշեցուց, որ զանազան կազմակերպութիւններ եկած ու գացած են, բայց Հ.Մ.Ը.Մ.ը 28 Մայիս 1918ի պայքարէն ու մեր ժողովուրդի ծո-

ցէն ծնած, կը մնայ միշտ երիտասարդ: «Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքները եւ մեր ազգային սրբութիւնը շունչ եւ արիւն տուած են մեզի եւ մեր բոլորին պարտականութիւնն է պահպանել զանոնք», - ըսաւ Չորոյեան Արք.: Սրբազանը յիշեցուց հայ գիրերու գիւտին 1600ամեակը եւ մեծ Եղեռնի 90ամեակը, շեշտելով, որ իբրեւ վկաները մեր ազգի պատմութեան, պէտք է ուխտենք պահպանել հայկական սրբութիւնները:



որոնք ստեղծեցին շուրջպարերու խանդավառ մթնոլորտ: Կէս գիշերէն ետք, ժամը 1ին, խանդավառութիւնը դադաթնակէտին հասաւ Գառնիկ Սարգիսեանի ազգային-յեղափոխական երգերով: Ներկայ երիտասարդութիւնը, Եռագոյն դրօշներ բարձրացուցած, երգիչին ձայնակցեցաւ մինչեւ առաւօտեան ժամը 4:

**ԱՌՅԵԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՍՏԱՌՈՒՄԸ**

Միջ-մասնաճիւղային 15րդ մարզախաղերուն պատքեթպոլի եւ վոլեյպոլի ախոյեանական խաղերը տեղի ունեցան 3 Յուլիսի յետմիջօրէին, իսկ ֆութպոլի աւարտական խաղը կատարուեցաւ 5 Յուլիսի առաւօտեան ժամը 10ին, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի եւ Ուաշինկթընի երէց տղոց խումբերուն միջեւ: Հետաքրքրական խաղը աւարտեցաւ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի

**ԵՂՔ ՅԱԿՈՔ ԻԾՆԱՆԵԱՆՆԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԸ**

Խօսքերէն ետք, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան Հ.Մ.Ը.Մ.ի «Մառաշտի թեմ» շքանշանով պարգևատրեց երկար տարիներ միութեան ծառայութիւն մատուցած, Ֆիլատելիոյ մասնաճիւղի անդամ եղբ. Յակոբ Իշխանեանը:

Յայտագրի պաշտօնական բաժնի աւարտին, բոլորը վայելեցին երգիչ Արամ Ասատրեանը եւ նուագախումբը,

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yarm Armuté-Berriat, Ag. Ferre via du Ciel. Licence 075 960031. Saberatours 2009-2005

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



Պոսթընի եւ Մոնթթէալի մասնաճիւղերու մարզիկներ:

Թորոնթոյի խումբին՝ 5-0 արդիւնքով: (Մարզախաղերու արդիւնքներուն ընդհանուր դասաւորման պատկերը տեսնել առանձին):

**ՄԱՐԶԱՆԱԿԵՐՈՒՆ ՓԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆԸ**

Մարզախաղերու աւարտին, փակման մեծաշուք հանդիսութիւնը տեղի ունեցաւ 5 Յուլիսի կէսօրուան ժամը 1ին, «Հէվըրֆորտ» քոլէճի մարզադաշտին վրայ: Իսկապէս վայելք էր բաժնեկից ըլլալ 7000է աւելի մարզիկներու եւ սկաուտներու խանդավառութեան:

Դրօշակիրներու առաջնորդութեամբ, յաջորդաբար դաշտ մուտք գործեցին շրջանի սկաուտական կազմերու

(արի, արենոյշ, արծուիկ, գայլիկ, կակուղ թաթիկ) խումբերը եւ մարզախաղերու մասնակից 11 մասնաճիւղերու մարզիկները:

Օրուան հանդիսավարն էր եղբ. Անդրանիկ Տէր Օհաննէսեան, որ հանդիսականներուն ներկայացուց հպարտ ու բաց ճակատով Հ.Մ.Ը.Մ.ական սերունդը: Իւրաքանչիւր մասնաճիւղի մասին հաղորդուեցան տեղեկութիւններ, մինչ մարզիկ-մարզիկուհիները խորիտ քայլերով կ'անցնէին պատուոյ բեմին առջեւէն:

Հանդիսավար եղբայրը ներկայացուց օրուան պատուոյ հիւրերը՝ Արե-

ւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Տիրան Շահինեան,

**ԱԹԼԵԹԻԶՄԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՍԱՒՈՐՈՒՄԸ**

ՄԱՍՆԱՃԻԻՂ	ԿԷՏ
Տիթրոյթ	298
Պոսթըն	201
Ֆիլատելֆիա	176
Փրովիտընս	119
Թորոնթօ	0
Շիքսկօ	0
Ուաշինկթըն	0
Մոնթթէալ	0
Տլորիտա	0
Նիւ Ճըրպի	0

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԱԻՍԳՈՅՆ ԱՐԴԻՒՆՔ**

Տղաք	Սեւակ Աւագեան	Շիքսկօ
Աղջիկներ	Սարա Տիլանձեան	Տիթրոյթ

«ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ» ՄՐՅԱՆԱԿ Տիթրոյթի եւ Շիքսկոյի մասնաճիւղեր

**ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ**

ՄԱՐԶԱՆԱԿ	ՍԵՌ	ՏԱՐԻՔ	ԽՈՒՄԲ	ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ
Տուրպոլ	Տղաք	Երէց	6	Թորոնթօ	Ուաշինկթըն	Նիւ Եորք	Շիքսկօ
Տուրպոլ	Տղաք	Կրտսեր	3	Մոնթթէալ	Թորոնթօ	Պոսթըն	
Տուրպոլ	Տղաք	Պատանի	3	Մոնթթէալ	Ֆիլատելֆիա	Նիւ Եորք	
Տուրպոլ	Տղաք	Փոքր	4	Ուաշինկթըն	Պոսթըն	Ֆիլատելֆիա	
Վոլիպոլ	Տղաք	Երէց	2	Ուաշինկթըն	Շիքսկօ		
Վոլիպոլ	Աղջիկներ	Երէց	4	Շիքսկօ	Փրովիտընս	Ուաշինկթըն	
Պասքէթպոլ	Աղջիկներ	Երէց	4	Փրովիտընս	Պոսթըն	Նիւ Եորք	Տիթրոյթ
Պասքէթպոլ	Աղջիկներ	Կրտսեր	4	Ֆիլատելֆիա	Թորոնթօ	Պոսթըն	
Պասքէթպոլ	Աղջիկներ	Պատանի	4	Ֆիլատելֆիա	Տիթրոյթ	Պոսթըն	
Պասքէթպոլ	Տղաք	Վեթերան	5	Պոսթըն	Նիւ Ճըրպի	Ֆիլատելֆիա	Տիթրոյթ
Պասքէթպոլ	Տղաք	Երէց	14	Նիւ Եորք	Մոնթթէալ	Պոսթըն	
Պասքէթպոլ	Տղաք	Կրտսեր	9	Փրովիտընս	Շիքսկօ	Տիթրոյթ	
Պասքէթպոլ	Տղաք	Պատանի	7	Պոսթըն	Նիւ Ճըրպի	Տիթրոյթ	
Պասքէթպոլ	Տղաք	Փոքր	8	Տիթրոյթ	Ֆիլատելֆիա	Պոսթըն	

ՀՕՄԻ Արեւելեան շրջանի ներկայացուցիչ Նայիրի Պալանեան եւ Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի վարչական քոյր Իսկուհի Ոսկանեան:

**ՀԻՒՐՆԿԱԼ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Տողանցքին յաջորդեցին խօսքերը: Առաջին խօսքը արտասանեց մարզախաղերու հիւրընկալ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի վարչական քոյր Իսկուհի Ոսկանեան: Ան գոհունակութիւն յայտնեց մարզախաղերու յաջողութեան համար եւ այս առթիւ յիշեցուց Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութիւնը, իբրեւ նոր սերունդին հայեցի դաստիարակութիւն ջամբող կազմակերպութիւն: Քոյրը կոչ ուղղեց ծնողներուն՝ իրենց զաւակները վստահելու հանրանուէր այս մեծ միութեան:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մարսէլ Գարեան, որ ողջունեց Ֆիլատելֆիոյ մասնաճիւղին երախտաշատ գործը, շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն եւ խօսքը ուղղեց ծնողներուն, յայտնելով որ անոնք չբաւարարուին միայն դիտողներ ըլլալով՝ այլ մասնակից դառնան Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութեան:



Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի մարզիկներ:

լոր ներկաներուն եւ խօսքը ուղղեց ծնողներուն, յայտնելով որ անոնք չբաւարարուին միայն դիտողներ ըլլալով՝ այլ մասնակից դառնան Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութեան:

լոր ներկաներուն եւ խօսքը ուղղեց ծնողներուն, յայտնելով որ անոնք չբաւարարուին միայն դիտողներ ըլլալով՝ այլ մասնակից դառնան Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութեան:



# Travel Ways - Egypt

## NILE CROCODILE CRUISES




*Incoming Tour Operator  
Hotel & Cruise Reservation  
Transportation  
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1  
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt  
Tel: 02 2739400/500/600  
www.travelways-egypt.com  
marketing@twaysegy.com



Եղբ. Գարեան իր խօսքին մէջ գնահատեց մարզախաղերու կազմակերպիչ մարմինն անսակարկ ծառայութիւնը եւ նշեց, թէ միջ-մասնաճիւղային 16րդ մարզախաղերը 2006ին տեղի պիտի ունենան Ուաշինկթընի մէջ:

**Հ.Յ.Գ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿՈՄՏԵԼԻՆ ԽՕՍՔԸ**

Հ.Յ.Գ. Արեւելեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէին խօսքը փոխանցեց եղբ. Սարգիս Տուտազեան:

Եղբ. Տուտազեան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ. ը հպարտութեամբ եւ յաղթանակի հրճուանքով կը տողանցէ իր մարզիկներով եւ սկաուտներով, 90ամեայ նահատակներու յիշատակին, Հայաստանի եւ աշխարհի տարածքին: Ան շնորհակալ էր Հ.Մ.Ը.Մ. ի յաղթանակը գրաւականն է մեր ժողովուրդին եւ հայրենիքին արձանագրելիք ապագայ յաղթանակներուն: Եղբ. Տուտազեան յիշեց Գարեգին Նժդեհի խօսքերը. «Եթէ կ'ուզէք գուշակել ժողովուրդի մը ապագան, նայեցէ՛ք անոր երիտասարդութեան»:

Շարունակելով, եղբ. Տուտազեան շնորհակալեց մարզախաղերուն յաջողութիւնը եւ համա-Հ.Մ.Ը.Մ. ական Շրջ մարզախաղերուն մասնակցելիք մարզիկները:

**ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան,



Հ.Մ.Ը.Մ. Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Վահրամ Դանիէլեան Տիթորոյթի մասնաճիւղի արշիւթներուն հետ:

այս առթիւ անդրադառնալով Հ.Մ.Ը.Մ. ի դերակատարութեան եւ կոչումին:

«Հ.Մ.Ը.Մ. ը կազմակերպութիւն ըլլալէ առաջ, ոգի է, գաղափարական ամրակուռ հնոց է, ուրկէ անցնող անհատը պիտի ստանայ հայ ժողովուրդի բարձրագոյն վկայականը, որ համալրասարակական տիտղոսի մը չափ արժեքաւոր է», ըսաւ Մկրտիչեան:

Ապա, շրջանի աշխատանքներուն մասին խօսելով, եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ «Հ.Մ.Ը.Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը կատարած է հրաշքի համագորգործ՝ ստոյգ կորուստէ փրկելով հազարաւոր պատանիներ, կրթելով զանոնք հոգեպէս եւ ֆիզիքապէս»:

«Լաւատեսութեամբ եւ հաւատքով

կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ. ը Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանին մէջ դարձաւ փարոս, դարձաւ ոգեղէն հայրենիք, դարձաւ ազգային պահակագունդ, դարձաւ մշտաձայն դրօշ՝ ներկայ ու գալիք սերունդներուն», ըսաւ եղբ. Մկրտիչեան իր եզրափակիչ խօսքին մէջ:

**ԱՌԱՋՆՈՐԳ ՄՐԱՋԱՄԵՆ ՓԱԿՄԱՆ ԽՕՍՔԸ**

Փակման հանդիսութեան հոսակ բանքը կատարեց Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան, որ իր խրախուսիչ պատգամը ուղղեց սկաուտ եւ մարզիկ Հ.Մ.Ը.Մ. ականներուն՝ ըսելով. «Հ.Մ.Ը.Մ. ը կ'ապրի հայօրէն եւ կը փոխանցէ մեր հայրերուն կանչը այս օտար ափերուն եւ պիտի շարունակէ դօղանջել յաւիտեան»:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց բոլոր գործիչներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ. ի մեծ ընտանիքէն ներս սերունդներ դաստիարակեցին նախանձախնդրութեամբ: Ան, իր կարգին, կոչ ուղղեց ծնողներուն, որպէսզի զաւակները յանձնեն Հ.Մ.Ը.Մ. ի դաստիարակիչ խնամքին: Ապա, իր խօսքը մարզիկներուն եւ սկաուտներուն ուղղելով ըսաւ. «Ախորժակով կը խօսիմ՝ ձեզի հետ, որովհետեւ ձեր մէջ կը տեսնեմ այդ ուժը, գոր դուք կու տաք ինձի: Շարունակեցէ՛ք տողանցել հայ ժողովուրդի վեհ նպատակներու իրագործ-



ման համար»:

Աւարտին, Սրբազանը «Պահպանիչ»ով օրհնեց ներկաները:

**ԲԱԺԱԿՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ**

Ի վերջոյ Հասաւ բաժակատուչութեան սպասուած պահը: «Պետրոս Կարապետեան» մրցանակի շրջուն բաժակը, որ կը տրուի մարզախաղերու կարգապահ եւ օրինակելի մասնաճիւղին, տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյթի եւ Շիքակոյի մասնաճիւղերուն: Բոլոր խաղերու ընդհանուր դասաւորման առաջնութեան բաժակը ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պոսթընի մասնաճիւղը, իսկ աթլետիկ միջոցաւորութեան բաժակին տիրա-



Փակման հանդիսութեան դաշտ մուտք կը գործեն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զոյղեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիելեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանաչին Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիելեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի մասնաճիւղի ատենապետ եղբ. Տիրան Ծահիմեան:

ցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյթի մասնաճիւղը:

Այսպէս, երկու ժամուան Հանդիսութենէ ետք, յետմիջօրէի ժամը 3ին, տողանցքով փակեցաւ յիշատակելի եւ անմոռանալի այս Հանդիսութիւնը, յուսալով որ 2006ի միջմասնաճիւղային մարզախաղերը վերանորոգուած եռանդով կը կատարուին Ուաշինկթընի մէջ:

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

**HOTEL**

★ ★ ★

**PAVILLON MONCEAU**

PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating / air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



# Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ, ԼՈՆՏՈՆԷՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԷՆ 10 ԳՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ

## Սեւան Նապարեան ՓԱՐԻՉ

Ի հիմնադրութենէն՝ 1977էն ի վեր, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մասնաճիւղը յաջողած է կազմակերպել տարեկան բանակումներ, որոնք երբեմն եղած են փոքրաթիւ, երբեմն՝ դժուար, բայց միշտ եղած են Հ.Մ.Ը.Մ.-ական ու ծառայած՝ իրենց նպատակին:

Այս ամրան բանակումը մասնաճիւղին Ձեռք բանակումն էր, որ ունեցաւ իր վերելքը ապրող ու յիշեցնող տարիներու փայլքը: Նախ՝ անցեալ տարիներու մասնակիցներու «ճղճիմ» ու «նիհար» թիւը բարձրացած էր 75ի, ապա՝ բարելաւած էր մասնակցութեան որակը: Այս տարուան բանակումը, մասնակիցներու իր այլազանութեամբ, նոր շունչ փո-



Պատուիրակութիւններու ներկայացուցիչները Կոմիտասի արձանին առջեւ: Իրմէ դուրս բացուելու եւ տարբերութիւններու շինիչ միասնութեան առիթը



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտներ:

ստեղծեց ան:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 21րդ բանակում մին փոքր պատուիրակություններով մասնակցեցան Հայաստանի, Լոնտոնի եւ Լիբանանի մասնաճիւղերէն 10 քոյր-եղբայրներ:



Լոնտոնի սկաուտներ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանի շիրիմին շուրջ:

Փարիզեան շրջանի մօտ, Ֆրանսական սկաուտութեան կալուած՝ Փամպլիլի բանակավայրին մէջ, 3-12 Յուլիսին, սկաուտները մօտէն ծանօթացան սկաուտական գիտելիքներու, մար-

զանքներու, երգերու, կանչերու եւ ազգային նիւթերու: Հրաւիրեալ դասախօսներ ձեռնհասօրէն ներկայացուցին իրենց նիւթերը:


Շաբաթ, 9 Յուլիսին, հիւր մասնաճիւղերու քոյրերն ու եղբայրները, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի երէց սկաուտները այցելեցին Գրիգոր Յակոբեանի շիրիմը ու իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր անդամին:

Բանակումի ընթացքին կատարուեցաւ Ա. կարգի սկաուտական գիտելիքներու փոխանցում՝ Լիբանանի Շրջանային իմբապետ եղբ. Յակոբ Չպլաքեանի կողմէ: Տասնմէկ սկաուտներ արժանացան այդ կարգին:

Ուրախառիթ պահ մը կը մնայ «Այցելութեան Օր»ն ու խարուկահանդէսը:

Կիրակի, 10 Յուլիսին, ծնողներու եւ բարեկամներու հաւաքատեղի դարձած էր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի բանակավայրը, ուր ամբողջ օրուան ընթացքին անոնք վայելեցին իրենց զաւակներուն կողքին, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին փոխանցած դիւթական ոգին:

Յետմիջօրէին, սկաուտական պաշտօնական արարողութեամբ տեղի ունեցան դրօշակի արարողութիւնն ու կար-



Կաթողիկոսական պատուիրակ, Երոպայի եւ Փարիզի Առաջնորդ Գիտ Արք. Նաքքաշեան կը փոխանցէ իր պատգամը:



Լիբանանի Երջանային խմբապետ եղբ. Յակոբ Չպլաքեան ընդհանուր խմբապետի աստիճանը տալէ ետք՝ ուսնոցներ կու տայ եղբ. Պօղոս Մահպուլպեանին:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն յուշանուէր՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Հրաչ Սիսեռեանին:



գերու յանձնումը: Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին մասնակցութեամբ հնչեցին երեք քայլերգներ՝ Փրանսական, հայկական եւ սկաոտական: Ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուլպեան կատարեց բանակումին պաշտօնական փակման հանդիսութիւնը եւ հրաւիրեց հիւր պատուիրակութիւններու պատասխանատուները, յայտնելու իրենց սրտի խօսքը: Տեղի ունեցաւ յուշանը-

ւէրներու փոխանակում: Այնուհետեւ, Կաթողիկոսական Պատուիրակ, Եւրոպայի եւ Փարիզի Առաջնորդ Գիւտ Արքեանքաշեան, որ ներկայութեամբը պատուած էր Հ.Մ.Ը.Մ-ի բանակումը, հայրական իր պատգամը ուղղեց բանակողներուն: Ան սերունդներու ժառանգութեան՝ ազգային թէ կրօնական փոխանցման կարեւորութիւնը շեշտեց, այս պարագային Հ.Մ.Ը.Մ-ի ճամբով:

Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ եղբ. Հրաչ Սիսեռեան, որ գոհունակութիւն յայտնեց բանակողներու թիւին բարձրացման համար ու մատնանշեց յարատեւութեան անհրաժեշտութիւնը՝ աշխատանքի մէջ: Հոսակ, խարոյկին շուրջ նստած՝ ներկաները վայելեցին ու լիացան սկաոտական երգով ու կատակով, ժպիտով ու բանակավայրի կեանքով:

**We Can Light Up A City**

**G. AYANIAN & SONS**

Electricity  
Pumps  
Lighting  
Air Conditioning  
Video Phone

— G. AYANIAN & SONS —  
BEIRUT

**Dora: 01-255 222/3/4/5/6 Gemmayze: 01-447 000 - 447 940 Mobile: 03-627 728/9**  
**Fax: 01-265 187 - 582 357 E-mail: gasons@dm.net.lb www.ayanian.com**



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱՍ ՎԵԿԱՍԻ «ԱՐՑԱԽ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Հ.Մ.Ը.Մ.ի թղթակից  
ԼԱՍ ՎԵԿԱՍ

# 18

Յունիս 2005ը պատմական օր մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղին համար: Այդ օր, երեկոյեան ժամը 7.30ին, մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կողմէ կազմակերպուած ճաշկերոյթին ընթացքին, 13 արի-արեւոյճներ եւ 4 գայլիկ-արծուիկներ սկաուտական իրենց խոստումը տարով՝ անցան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը:

Եզակի այս ձեռնարկին ներկայ էին աւելի քան 150 հայորդիներ, որոնց կարգին՝ վեր. դոկտ. Գեղամ Թաշճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Օշին Յարութիւնեան («Արցախ» մասնաճիւղի ներկայացուցիչ), Վարդգէս Շիրտրմեան, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ, Շրջանային փոխ խմբապետ եղբ. Սադո Թաշճեան, բազմաթիւ ծնողներ, հիւրեր, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ:

Օրուան հանդիսավարութիւնը կատարեց մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի անդամ եղբ. Սարգիս Մասնէրճեան: Եղբայրը բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, բացուած յայտարարեց օրուան ձեռնարկը եւ հրաւիրեց վեր. դոկտ. Գեղամ Թաշճեանը, որ օրհնեց սեղաններն ու ներկաները եւ յաջողութեան մաղթանքներով շնորհակարեց մասնաճիւղը՝ կազմակերպուած ձեռնարկին համար:

Սկաուտական Խորհուրդի կողմէ պատրաստուած ընթրիքէն ետք, մասնաճիւղին սկաուտական բաժանմունքին անդամները կատարեցին դրօշակի արարողութիւն:

Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ եղբ. Օշին Յարութիւնեան, որ անհուն գոհունակութիւնը



Եղբ. Օշին Յարութիւնեան ելոյթի պահուն: Զախին՝ օրուան հանդիսավար եղբ. Սարգիս Մասնէրճեան:

յայտնեց ի տես խտացած շարքերով աշխուժացած մասնաճիւղին եւ ըսաւ. «Շնորհաւորում եմ մասնաճիւղի բոլոր անդամներին անխտիր, իրենց բեղուն գործունէութեան համար: Ուժ եւ կորով եմ մաղթում եւ համոզուած եմ, որ այս մասնաճիւղը, գաղութի զօրակցութեամբ, առաւել կը խտացնի սկաուտական եւ մարզական իր շարքերը եւ կեդրոն մը ունենալու հրամայականը իրականութիւն կը դարձնի»:

Ապա, տեղի ունեցաւ օրուան գլխաւոր առանցքը հանդիսացող սկաուտական խոստման արարողութիւնը, գլխաւորութեամբ մասնաճիւղի խմբապետ եղբ. Ճէք Գասամանեանի եւ Շրջանային փոխ խմբապետ եղբ. Սադո Թաշճեանի: Օրուան կնքահայրերն էին Արամ Անուշեան, եղբ. Հայկ Աղամեան, Փօլ Պաղտիկեան, Կարապետ Պետրեան, Հրայր Տէտէեան, Զաւէն Տէմիրճեան, Կէրի Տիրացու, եղբ. Օշին Յարութիւնեան, Տիրան Ճէդէյեան, Քէն Գապատեան, Հայտի Գասամանեան, եղբ. Բաֆֆի Սարգիսեան եւ եղբ. Թորոս Սուսա-

նի: Իւրաքանչիւր կնքահայր սկաուտական դաւանանքի կէտ մը յիշեցնելէ ետք՝ խոստման պատրաստ արի-արեւոյճներուն, վառեց խորհրդանշական մոմ մը եւ գալն յանձնեց իր սանին:

Այնուհետեւ, 13 պատանիներ, ամբողջացուցած ըլլալով սկաուտական իրենց գիտելիքներուն ուսուցումը, հրապարակաւ խոստացան ծառայել Աստուծոյ, հայ ազգին ու հայրենիքին, գործել բարիք մը ամէն օր եւ հնազանդիլ հայ սկաուտի դաւանանքին:

Սկաուտական խոստման արարողութեանէն ետք, չորս գայլիկ-արծուիկներ ծնրադիր կատարեցին գայլիկ-արծուիկներու իրենց խոստումը եւ հաստատակամութեամբ խոստացան հնազանդիլ Աստուծոյ, իրենց Աքելային եւ վոհմակի օրհներին:

Ուրախ միջնորդութի մէջ յանձնուեցան խոստում տուած քոյր-եղբայրներուն սկաուտական փողկապները:

Մասնաճիւղի վարչութեան անունով, խոստում տուած արի-արեւոյճներն ու գայլիկ-արծուիկները շնորհա-



ւորեց ատենապետուհի քոյր Նորա Արմէնեան: Ան ներկայացուց մասնաճիւղի վարչութեան անդամները, ձեռնարկի կազմակերպիչ Սկաուտական Խորհուրդի կազմն ու մասնաճիւղին խմբապետը, բարձր գնահատեց անոնց նուիրումն ու աշխատանքը, որոնց արդիւնքը յստակ դարձաւ բոլորին: Քոյրը գնահատեց նաեւ սկաուտական բաժանմունքը, եւ յատկապէս՝ քոյր Արտա Մահսէրէճեանը, որ իր ձեռագիրն աշխատանքները վաճառելով՝ անոնց հասոյթը կը նուիրէ մասնաճիւղին:

Ապա, քոյրը բեմ հրաւիրեց Հայ-Ամերիկեան Մշակութային Ընկերակցութեան (Armenian-American Cultural Society) նախագահ Անուշ Արմէնեանը, որ շնորհաւորելէ ետք մասնաճիւղի աշխատանքը, իր գլխաւորած ընկերակցութեան անունով հազար տոլարի նուիրատուութեան հաստատագիր մը յանձնեց քոյր Նորա Արմէնեանին՝ առ ի գնահատանք մասնաճիւղին նոր սերունդի հայեցի դաստիարակութեան համար տա-



Քոյր Մարո Քէշիշեան:

րած աշխատանքին: Այնուհետեւ, ատենապետուհին բեմ

հրաւիրեց քոյր Մարո Քէշիշեանը եւ վարչութեան անունով յուշանուէր մը յանձնեց անոր՝ առ ի երախտագիտութիւն մասնաճիւղի աշխատանքներուն երկար տարիներու իր սատարումին: Քոյր Քէշիշեան շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար, ընդգծելով, թէ «միութեանկան պարտականութիւնները առանց պայմանի կը կատարուին, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ի նման մեծ կազմակերպութեան մը պարագային, որ ստեղծուած է ազգին նորահաս սերունդներու դաստիարակութեան համար»: Այս առիթով քոյրը կող ուղղեց ներկայ ծնողներուն, որպէսզի առանց վարանումի կառչած մնան Հ.Մ.Ը.Մ.ին եւ վստահին իրենց զաւակները անոր, որպէսզի անոնք առողջ մթնոլորտի մէջ հասակնետեն եւ ընդլայնեն Հ.Մ.Ը.Մ.ի մաքուր միջավայրը:


Պաշտօնական յայտագիրը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգով:

**TOGETHER WE ARE STRONGER**  
**ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԲՈՐ ԵՆՔ**

**ԱՖՀԻԼ AFHIL**  
**Armenian Mutual Fund**  
 Tel. / Fax: 01 242556 - 242557



# ԱԽՈՅԵԱՆԱԿԱՆ ՆՈՐԱՆՈՐ ՏԻՏՂՈՄՆԵՐ ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԵՒ ԱՌՕ ՄՈՒՆՉՕՂԼԵԱՆԻ



ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄԷՋ՝ ԼԻՐԱՆԱՆԻ ԵՐԿՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ  
Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԿՐՏՍԵՐ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ

## Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

**Ա**նցնող ամիսները ճատրակի եւ փինկ-փոնկի ախոյեանական կարեւոր տիտղոսներ շնորհեցին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին, որուն ուրախութիւնն ու հպարտութիւնը մեծ եղաւ՝ ի տես քոյր Քնարիկ Մուրատեանի եւ եղբ. Աւօ Մուն-ջօղեանի փայլուն իրագործումներուն:

Ճատրակի արաբական աշխարհի 3 անգամ, իսկ Լիբանանի

6 անգամ ախոյեան՝ քոյր Քնարիկ Մուրատեան այս տարի կատարեց իր տեսակին մէջ եզակի նուաճում մը, երբ տիրացաւ Լիբանանի... տղոց ախոյեանութեան տիտղոսին:

Ախոյեանութեան մասնակցեցան 120 վարպետներ, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղէն քոյր Քնարիկ Մուրատեան, տղթ. Գէորգ Թերզեան եւ Վահանգն Մանճեան: Հ.Մ.Ը.Մ.ի «աստղը» իր 11 մրցումներէն 8 աւարտեց յաղթանակով, իսկ 3ը՝ հաւասարութեամբ: Ան պարտութեան մատնեց Լիբանանի նախկին ախոյեաններ Անթուան Քասսիբը եւ Ֆայսալ Խէյրալլան, ինչպէս նաեւ՝ միջազգային դասաւորում ունեցող շարք մը վարպետներ:

### ԵՂԲ. ՀԱՄԲԻԿ ՄԻՍԱՔԵԱՆ Կ'ԸՆՏՐՈՒԻ ԼԻՐԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԱՆԴԱՄ...

Օգոստոսին, Լիբանանի մէջ տեղի ունեցաւ ֆութպոլի նոր ֆետերասիոնի ընտրութիւն: Հ.Մ.Ը.Մ. տարիներու աւանդութեան համաձայն, ներկայացուցիչը ունեցաւ ֆետերասիոնին մէջ, յանձնիս՝ Շրջանային Վարչութեան քարտուղար եղբ. Համբիկ Միսաքեանի:

Նոր ֆետերասիոնի ընտրութեան մասնակցեցան քուէարկելու իրաւունք ունեցող Լիբանանի 148 ակումբներէն 140ը: Ընտրուեցաւ 11 անդամներէ բաղկացած նոր ֆետերասիոն մը, որուն մաս կը կազմեն Հաշմ Հայտար, Ռահֆ Ալամէ, Ահմէտ Քամարէտտին, Ռեմոն Սըմաան, Մուսա Մաքքէ, Ռահիք Արամունի, Սըմաան Տուէյիի, Մահմուտ

Ռոպաս, Մուսթաֆա Համտան, Ժիհատ Շրիաֆ եւ եղբ. Համբիկ Միսաքեան:

### ... ԻՍԿ ԵՂԲ. ՎԱՉԷ ԾԱՏՈՒՐԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՄԱՌՆԹԸՆ ՊԱՅՔԻ ՄԱՐՁՈՒՄԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ

Հեծելարշաւի մատթըն պայքի 2007ի Ասիոյ ախոյեանութեան նախապատրաստական աշխատանքներու ծիրէն ներս, անցնող ամառ, Չուիցերիոյ մէջ տեղի ունեցաւ այս մարզախաղի մարզիկներու եւ մարզիչներու յատուկ դասընթացք մը, որուն Լիբանանէն մասնակցեցաւ եղբ. Վաչէ Ծատուրեան, Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի նախագահը:

Դասընթացքին աւարտին, համապատասխան վկայականներ ստացան 17 մարզիկներ եւ 15 մարզիչներ, որոնց կարգին՝ եղբ. Ծատուրեան:



Ախոյեանութեան իր տիտղոսով քոյր Քնարիկ կատարեց նաև այլ իրագործում մը, դառնալով ճատրակի պատմութեան ամէնէն փոքր վարպետուհիներէն մէկը, որ կը շահի նաև իր երկրի տղոց ախոյեանութեան տիտղոսը:

Իր կարգին, 14ամեայ եղբ. Աւօ Մունջօղլեան յաղթանակէ յաղթանակ պատուաբեր յաջողութիւններ ապահովեց Հ.Մ.Ը.Մ-ի փոնկ-փոնկի սիրահարներուն, երբ տիրացաւ Լիբանանի 1991-1992ի ծնունդներու, ապա նաև՝ 1989-1990ի ծնունդներու դասակարգի զոյգ ախոյեանութիւններուն, բոլորին յուշելով թէ մօտիկ ապագային ան պիտի ըլլայ փինկ-փոնկի Լիբանանի անվիճելի «աստղ»երէն մէկը:

**ԱՆՈՅԵԱՆՎԱՆ ԱՅԼ ՏԵՏՂՈՍՆԵՐ**

Ճատրակի Լիբանանի տղոց ախոյեանութեան տիտղոսը եթէ նորութիւն մըն էր Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքին, ապա՝ աղջկանց ախոյեանութեան ճակատագիրը ի սկզբանէ յստակ կը թուէր ըլլալ: Վերջին 10 տարիներուն, այդ տիտղոսին փոխն ի փոխ տիրացած էին Քնարիկ եւ Սիւզան Մուրատեան քոյրերը:

Քնարիկ Մուրատեան, 1996ի, 1997ի, 1998ի, 2000ի, 2001ի եւ 2004ի ախոյեանը, չմասնակցեցաւ այս տարուան ախոյեանութեան եւ, հետեւաբար, տիտղոսին գլխաւոր թեկնածու՝ քոյր Սիւզան Մուրատեան (1995ի, 1999ի, 2002ի եւ 2003ի ախոյեան) 4 յաղթանակով եւ մէկ հաւասարութեամբ խլեց առաջնութիւնը:

Այսպէսով, Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղէն Քնարիկ եւ Սիւզան Մուրատեաններ իրենց ամբողջական տիրապետութիւնը հաստատեցին Լիբանանի տղոց եւ աղջկանց ճատրակի ախոյեանութիւններուն վրայ:

Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղը յիշատակելի յաջողութիւններ ունեցաւ նաև պասքեթպոլի Լիբանանի տարիքային ախոյեանութիւններուն: Մասնաճիւղին 1987-1988ի եւ 1995-1996ի ծնունդներու աղջկանց խումբերը տիրացան Լիբանանի առաջնութեան, մինչ 1991-1992ի եւ 1993-1994ի ծնունդներու խումբերը հանդիսացան երկրորդ:

Ախոյեանութեան տիտղոսներուն պատիւը գնաց հետեւեալ քոյրերուն.-

●1987-1988ի ծնունդներ.- Լուսի Քէօրքիւնեան, Փաթիլ Թերզեան, Շաղիկ Արզումանեան, Նարօ Ալեքսանտրեան, Լուսի Պօղոսեան, Մենար Պոյաճեան, Վիքի Գուլաճեան, Էտուրնա Մաշալանի, Ռաշա Քորքիս, Նաթալի Սվաճեան, Սանտրա Նաժմ եւ Սուլա Աբրահամեան (խմբապետ):

●1995-1996ի ծնունդներ.- Լայիկ Աղասարգիսեան, Շաղիկ Տէր Պետրոսեան, Ալիք Գանտահարեան, Վանի Գլըճեան, Լարա Գրաճեան, Մեղրի Թորոսեան, Մակի Զաքարեան, Վարդի Գուլումճեան, Փաթիլ Գէորգեան, Միրնա Կէօլչէնեան, Լարա Գապասագալեան, Սարին Զոպանեան, Մարինա Սարեան, Մեղրի Մեսրոպեան եւ Արազ Արամալեան:

**Maison Mere**  
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt  
Tel: (202) 3913296 - 3918542  
Fax: (202) 3903899

**Ramses Hilton**  
Tel: (202) 5758000 - 5744400  
Direct: (202) 5751790

**Zamalek**  
11 Hassan Sabry st., Degla center  
Tel: (202) 3322121 - 3322130  
Fax: (202) 3322130

**VARTAN KAZANDJIAN**

**KAZANDJIAN**

E-mail: vartan@intouch.com

**Joillier-Orfevre Fonde en 1920**



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ

## Նորա Սարգիսեան ԹՈՐՈՆԹՕ

Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Սկառտական Խորհուրդին կազմակերպութեամբ, 2005-2006 սկառտական տարեշրջանը իր աշխատանքներուն սկսաւ 26-28 Օգոստոս 2005ին, մասնաճիւղի խմբապետական կազմին սեմինարով, «Ուոտչմէնթ Թրէյլը» բանակավայրին մէջ:

15 խմբապետ-խմբապետուհիներ վայելեցին Սկառտական Խորհուրդին պատրաստած բժախնդիր եւ հետաքրքրական յայտագիրը:

Սեմինարը բացուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք մասնաճիւղի խմբապետուհի քոյր Սեւան Տէմիրճեան կատարեց բացման խօսքը: Սկառտական Խորհուրդի ատենապետուհի քոյր Դալար Գասապեան, իր կարգին, բարի գալուստ մաղթեց մասնակցող խմբապետ-խմբապետուհիներուն եւ թելադրեց, որ լաւագոյն ձեռով օգտուին սեմինարին: Սեմինարին ներկայացուեցան հետեւեալ դասախօսութիւնները:-

● «Հ.Մ.Ը.Մ.ի ներքին կանոնագիրը» - դասախօս՝ եղբ. Անդրանիկ Խաչատուրեան.

● «Մանուկներու հոգեբանութիւնը եւ դեկավար ըլլալու մեթոտները» - քոյր Վերժիկ Աբրահամեան.

● «Եկեղեցւոյ խորհուրդները եւ Պատարագի գգեստները» - Մեղրիկ Մ. Վրդ. Բարիբեան.

● «Հ.Մ.Ը.Մ.ի եւ գաւառական սկառտական գիրքերը» - քոյր Հելէն Նաճարեան.

● «Անհատի ինքնապաշտպանութիւնը» - եղբ. Վիգէն Գալուստեան.

Սեմինարը ընդգրկեց նաեւ սկառտական զանազան խաղեր: Դասախօսութիւններու ավարտին, ներկայացուած նիւթերու շուրջ տեղի ունեցաւ զարգացման մրցում:

Սեմինարի ընթացքին բանակավայր այցելեցին վարչութեան եւ Սկառտական Խորհուրդի անդամները:

Made from one single slice of natural Australian opal



# Classique

OPAL DIAL WATCH


Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)



# ԵՂԲ. ՄԻՄՈՆ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Որոշ տարիքէ մը ետք, մարդ յաջորդ վայրկեանին վրայ վստահութիւն չի կրնար ունենայ: Ներքին դաւաճանութիւն մը, ու ահա մահը կը մտնէ:

Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

## Պետրոս Շեմմեսեան ԱՅՆՃԱՐ

**Ի**սկապէս «ներքին դաւաճանութեան» մը զոհը գնաց եղբ. Միմոն Գազանճեան, առանց ցաւի, ահի կամ ախի, նստած՝ տան բակին ծառին տակը, 76 տարեկան հասակին:


Սովորութիւն է, ընկեր-եղբայր անուանելու բոլոր այն վաստակաւորները, որոնց կուսակցական եւ Հ.Մ.Ը.Մ.ական վաստակը տարիներու ընթացքին հաւասար ձեւով բաժնուած է զոյգ կազմակերպութեանց մէջ: Այդպիսի նուիրեալներէն էր ընկեր-եղբայր Միմոն Գազանճեան:

Դաշնակցական ընտանիքի մէջ ծնած էր Միմոն Գազանճեան: Ասոր պերճախօս ապացոյցը իր երէց եղբայրներուն անուններն են՝ Քրիստափոր եւ Ռոստոմ, ինքը կրտսերը՝ Միմոն: Հայրը Մուսա Լեբան հերոսամարտի վարպետ գինագործ «Մախուլ»ն էր, որ ուզած էր վերաթարմացնել սրբազան երրորդութեան յիշատակը: Իսկապէս իր անուան տէրն էր:

Վտիտ մարմնով, լայնածակատ, համակ խիղճ ու նուիրումով մարդ էր ամէն բանէ առաջ: Իբրեւ Այնճարի ըմպելի ջուրի տարիներու գանձիչ, մերժած էր չվճարողին ըմպելի ջուրի մատակարարումը դադրեցնել, եւ այս՝ հակառակ ըմպելի ջուրի յանձնախումբին հրահանգին: Իր առարկութիւնը այն էր, թէ՛ «ի՞նչպէս կարելի է Աստուածատուր ջուրին բարիքէն զրկել թերացող այնճարցի ընտանիքին մանուկները»: Գաղափարապաշտ եւ նուիրեալ դաշնակցական էր Միմոն. սակաւախօս, սակայն վճռորոշ էր իր խօսքը կոմիտէի ժողովներուն մէջ: Մեր մէջ լաւագոյն այնճարագէտն էր ան, եւ այս իսկ պատճառով, Սարգիս Զէյթլեանի փնտռած խօսակիցն էր: Իրեն կը վստահուէին գերագոյն գաղտնապահութիւն եւ անձնական վտանգ ենթադրող կուսակցական գործերը, եւ այս՝ տարիներ շարունակ: Երբ խուճապ էր իր չորսդին, ինք հանդարտեցնողն ու վստահութիւն ներշնչողն էր: Հազիւ նախակրթարանաւարտ էր, սակայն այնքա՛ն բաներ ունէր սորվեցնելիք մեզի՝ համալսարանականներու: Ան թրծուած էր կեանքի համալսարանի քուրալին մէջ:

Կարելի է շատ երկար գրել իր կուսակցական կեանքին մասին, սակայն անդրադառնանք իր գաղափարական եւ միութենական կեանքի միւս երեսին՝ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքին:

Իր մահէն շուրջ տասը օր առաջ էր, երբ կանգ կ'առնէի իր մօտ, որպէսզի յաւելեալ տեղեկութիւններ առնեմ երկուքիս վարչական եղբայր՝ Ասատուր Սթամպուլեանին մասին: Ուրախացաւ, որ մահագրութիւն մը պիտի գրուէր եղբայր Ասատուրին մասին, առանց դոյզն կասկածը կամ մտադրութիւնը ունենալու, թէ կարճ ժամանակ ետք ի՞ր ալ մահագրութիւնը գրելու անսպասելի, դժուարին եւ ապերախտ պարտականութիւնը պիտի ունենայի կրկին: Կուսակցական եւ Հ.Մ.Ը.Մ.ական մեր գործակցութիւնը այնքա՛ն սերտ էր, որ կարիքը չզգացուեցաւ իր մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու այլ մարդոցմէ: Երիտասարդական տարիքը շատոնց ձգած, ականջալուր էր երիտասարդական իւրաքանչիւր բաղձանքի, ակնկալութեան եւ առաջարկի: Ամբողջական հաւատք ունէր մեր երիտասարդութեան: Անմիջապէս դրական պատասխան կու տար ակումբին պասքեթպոլի դաշտը Այնճարի կարմիր փոշիին



1993. եղբ. Միմոն Գազանճեան «Մառայութեան» շքանշան կը ստանայ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի օրուան Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Պէօյիքեանէն:

փոխան ճերմակ փոշիով «արդիականացնելու» մարզիկներու պահանջին:

Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտները կը նկատէր Հ.Մ.Լ.Մ.ի ներկան եւ ապագան: Հ.Մ.Լ.Մ.ի վարչական աշխատանքները ձգելէ ետք իսկ՝ երկար տարիներ, թէ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ թէ պետական բոլոր նամակները կու գային

եղբ. Սիմոն Գազանճեանի անունով:

Պիտի անցնին տարիներ, երկա՛ր ժամանակներ, սակայն Այնճարն ու այնճարցին, կուսակցական թէ միութենական գոյգ ընտանիքները երկա՛ր-երկա՛ր տարիներ պիտի յիշեն ընկեր-եղբայր Սիմոնը:

# ԵՂԲ. ԳԵՂԱՄ ՍԷՖԵՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## Կարպիս Գուլումճեան ԱԹԷՆՔ

Հիներէն մէկն ալ գնաց...  
Հ.Մ.Լ.Մ.ի Յունաստանի ընտանիքը կորսնցուց նուիրեալ եւ հաւատաւոր Հ.Մ.Լ.Մ.ական՝ եղբ. Գեղամ Սէֆէրեանը:

Եղբ. Գեղամ ծնած էր Ֆիքսի հայահոծ շրջանը, 1923ին: Փոքր տարիքէն անդամակցած էր Հ.Մ.Լ.Մ.ին եւ Հ.Յ.Դ.ին: Եղած էր Հ.Մ.Լ.Մ.ի Աթէնքի (Ֆիքս) մասնաճիւղի լաւագոյն աթլէթն ու ֆութպոլիստը, ապա՝ մասնաճիւղի եւ Շրջանային Վարչութեան ու նաեւ՝ Ֆիքսի Հ.Յ.Դ. Կոմիտէի անդամ ու երիտասարդականի պատասխանատու:

Եղբ. Գեղամ իր ստանձնած բոլոր պարտականութիւններուն մէջ կը ջանար ըլլալ պարտաճանաչ ու կարգապահ: Ան ամուսնացած էր Արուս-Մարո Արսէնեանի հետ եւ բախտաւորուած երկու մանչ զաւակով՝ Սերոբ եւ Յովսէփ:

Կիրակի եւ տօնական օրերուն, Ֆիքսի հայ կաթողիկէ Գ. Լուսաւորիչ եկեղեցւոյ դպրաց դասին կը բերէր իր սիրայօժար մասնակցութիւնը:

Մեր միութիւնները իրենց կազմակերպած ելոյթներու վիճակահանութեան նուէրին համար առաջին հերթին կը դիմէին եղբ. Գեղամին ու անպայման որ ոսկեղէն նուէր մը կը ստանային:

Շատ բան կարելի է գրել եղբ. Գեղամին ազգային մեր կեանքէն ներս ունեցած նպաստին մասին:

Վերջին տասը տարիներուն, իր գործի պայմաններուն հետեւանքով ընկճուած, հիւանդացաւ եւ ժամանակ մը մենակեաց տառապալի կեանք մը ապրելէ ետք, 10 Օգոստոս 2005ին կեանքէն յաւէտ հրաժեշտ տուաւ:

Եղբ. Գեղամին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ հայ կաթողիկէ հայոց Գ. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Արարողութեան ակարտին, Տ. Ռա-



ֆայել Շէֆիքեան եւ եղբ. Վրէժ Գալսյճեան յիշատակի խօսքերով անդրադարձան եղբոր կեանքին ու գործին:

Յուղարկաւորութեան մասնակցեցաւ նաեւ Ֆիքսի Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Նարեկ Քհնյ. Շահինեան:

Եղբ. Գեղամին վերջին հրաժեշտին ներկայ էին անմիջական մտերիմները միայն:

Սիրելի՛ եղբայր, պիտի չմոռնանք տարիներու եղբայրական անկեղծ բարեկամութիւնդ:

Խունկ ու ծաղիկ քաղցր յիշատակիդ:



Աւելի քան կէս դար առաջ, Հ.Մ.Լ.Մ.ի Յունաստանի աթլէթները Աթէնքի մարզադաշտին մէջ: Զախէն աջ՝ եղբայրներ Գեղամ Սէֆէրեան, Տիոնիք Յաբէթեան, Կրեմըտ Պալթայեան եւ Կարպիս Ֆուռունճեան: Չորսն ալ 100, 200 մետր վազքի եւ 4 x 100 մետր դրօշաբաշտի Յունաստանի ախոյեաններ:



# ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃ

Սալբի Լատոյեան  
ՊԷՅՐՈՒԹ

**Ս**եւանայ լիճը Հայաստանի հրաշալի հպարտու-  
թիւններէն մէկն է, որ կոչուած է նաեւ  
Սեւանայ ծով եւ Գեղամայ ծով: Ան կովկասի  
մեծագոյն լիճն է, որ կը գտնուի ծովու մակերեսէն

1916 մ. բարձրութեան վրայ:

Սեւանայ լիճին մէջ կը թափին 28 գետ ու գետակ, որոնցմէ յիշենք՝ Զկնագետը, Գաւառագետը, Կարճաղբիւրը, Մասրիկը եւ Վարդենիսը: Լիճէն սկիզբ կ'առնէ միայն մէկ գետ, որ կը կոչուի Հրազդան:

Սեւանայ լիճը ծանօթ է իր համեղ իշխանաձուկով: Լիճին կենդանական աշխարհը համեմատաբար աղքատ է: Իր  
մէջ կ'ընդգրկէ 29 տեսակ ջրային կենդանի:

Լիճին տարածութիւնը 1256 քառ. քմ. է, միջին խորութիւնը՝ 41 մետր: Ամենախոր մասը ունի շուրջ 90 մետր  
խորութիւն: Երկարութիւնը 75 քմ. է, իսկ միջին լայնքը՝ 19 քմ.:

Լիճին հիւսիս-արեւմուտքը կը գտնուի Սեւանի թերակղզին, որ մինչեւ 1953 կղզի էր, սակայն ջուրի մակարդակի  
նուազեցման պատճառով վերածուած է թերակղզիի: Անոր բարձրութիւնը 1976 մետր է:

874ին, Աշոտ Բագրատունի թագաւորին դուստրը հոն կառուցել տուած է երկու եկեղեցի՝ Առաքելոց (փոքրը) եւ  
Աստուածածին:

Սեւանայ լիճը Հայաստանի Հանրապետութեան տեսարժան վայրերէն մէկն է, որ նաեւ դարձած է բազմաթիւ  
նկարիչներու եւ բանաստեղծներու ներշնչման աղբիւրը:


## ԳԻՏԱԿԱՆ

### ԻՆՉՈՒ ԾՈՎՈՒՆ ԳՈՅՆԱ ԿԱՊՈՅՏ Է




Երբ երկինքը կապոյտ ըլլայ ծովուն ջուրի գոյնն ալ կապոյտ կ'ըլ-  
լայ, իսկ երբ երկինքը տխուր  
մոխրագոյն ըլլայ՝ ծովուն  
գոյնն ալ կը ստանայ նոյն գոյ-  
նը, արդեօք ինչո՞ւ: Բոլորս ալ գիտենք, որ ջուրը անգոյն է, երկինքին գոյնը  
կը թափանցէ ծովուն մակերեսը:

Արեւուն ճառագայթներն ալ շատ դիւրութեամբ կը թափանցեն ծովուն  
մէջ եւ այդ պատճառով ջուրին յատակը միշտ աւելի մութ կապոյտ կ'ըլլայ՝  
քան մակերեսը: Խոտերը, ժայռերը եւ ակաղը եւս ազդեցութիւն ունին ծովուն  
գոյնին վրայ:



# ԱՇԽԱՏԱՍԵՐ ՄՐՋԻՒՆՆԵՐԸ



Հետ կը հաղորդակցին յատուկ ձե-  
լով: Անոնք կը տարածեն յատուկ  
հոտ ունեցող քիմիական ֆերոմոն  
նիւթը, որպէսզի կարենան միւս  
մրջիկներուն ալ ցոյց տալ ուտելի-  
քի ճամբան:


Իսկ երբ ձմրան անձրեւ սկսի տե-  
ղալ, մրջիկները կը գոցեն մրջնա-  
նոցի բոլոր մուտքերն ու ելքերը՝  
մինչեւ օդին բարելաւումը:

Իւրաքանչիւր մրջիկն խումբին  
մէջ ունի իր պաշտօնը: Թագուհին  
բնակած վայրին մէջ մնալով կ'ածէ  
հաւկիթներ: Բանուոր մրջիկները  
կը հաւաքեն ճաշը, կերակրելու հա-

**Մ**իլիոնաւոր տարիներէ ի  
վեր աշխարհի  
վրայ կ'ապրին  
մօտաւորապէս 9500 տե-  
սակ մրջիկներ:

Մրջիկները կ'ապրին  
տախտակին կամ հողին  
մէջ: Անոնց տունը  
կը կոչուի մրջնանոց:  
Անոնք շարունակ տեղէ  
տեղ կը փոխադրուին՝  
ապահովելու համար  
իրենց ուտելիքը:

Մրջիկները իրարու



մար խումբին անդամները, իսկ գին-  
ւորները, որոնք խումբին մեծա-  
մասնութիւնը կը կազմեն, խումբը  
կը պաշտպանեն օտար միջատներէ:

Արու մրջիկները բոլոր աշխա-  
տանքներուն չեն մասնակցիր, այլ՝  
կ'ուղղուին դէպի այլ խումբեր եւ  
կ'ունենան կարճատեւ կեանք:



## ՀԱՆՏԵԼՈՒԿ

Շունչ ունիմ, բայց  
արիւն չունիմ:

(Պատասխանը՝ յաշորդի:  
Նախորդ հանելուկին  
պատասխանն էր՝ սիրտ):



## ՄԱՐԶԱԿԱՆ

## ԹԵՆԻՍԸ



**Թ**ենիսի խաղին ծագումը կու գայ Ֆրանսացի... կղե-  
րականներէ, որոնք ԺԳ. դարուն ստեղծած են խաղ  
մը, գոր կոչուած են «ձեռքի ափով խաղ»: Ինչպէս  
անունը ցոյց կու տայ՝ այս մարզախաղը կը խաղցուէր ձեռքով:

ԺԴ. դարէն ետք այս մարզախաղը կը հասնի նաեւ թագաւոր-  
ներու քով: ԺԶ. դարուն այս մարզախաղը կը հասնի Անգլիա եւ  
հոն կը կոչուի թենիս: Թենիս բառին արմատը կու գայ Ֆրանսե-  
րէն «Tenir» բայէն, որ կը նշանակէ բռնել: Ռաքէթը կը ստեղծուի  
եւ կ'օգտագործուի ԺԶ. դարուն:

1890էն սկսեալ թենիսը կը տարածուի աշխարհի չորս կողմը:



Էլի Հուլիշեան

## «ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ» ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւն մը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ: «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներն են-

● ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Չարլի Կալեան, Վարանդ Մելքոնեան, Հ.Մ.Ը.Մ.ի վեթերան ֆութպոլիստներ, Արեւմտեան Մ. Նահանգներու Ալգալին Առաջնորդարան, Ժիրայր Սարգիսեան, Ալպէր Շահինեան, Օրէնճ Քաունթիի «Մարդարապատ» մասնաճիւղ, Պրոպէնքի «Սիփան» մասնաճիւղ, Տրեպնոյի «Սասուն» մասնաճիւղ, Լա Քրեւենթալի «Շանթ» մասնաճիւղ, Լոս Անճելըսի մասնաճիւղ, Փասատինայի «Ալատամարտ» մասնաճիւղ, Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ, Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ, Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ, Ինլընտ Էմփայրի «Արալ» մասնաճիւղ, Վէյիի «Մասիա» մասնաճիւղ, Վաչէ Սողոմոնեան, Վիգէն Արեւեան, Յարութ Մատէնյեան, Էնտի Անտոնեան, Վահագ Թովմասեան, Սաութ Պէյի «Արագած» մասնաճիւղ, Ճօ Սամուէլեան, Վարդգէս Ալա-

հայտոյեան, Վարդգէս Արապեան, Գէորգ Ալթունեան, Գօգօ Պալեան, Արօ Սաղտրճեան, Վահէ Թաշճեան, Դաւիթ եւ Տաճատ Երէցեաններ, Մի ոմն, Հ.Յ.Դ. «Արմէն Գարօ» կոմիտէ, Վիգէն Դաւիթեան, Սագօ Կարապետեան, Խաչիկ Հաւաթեան, Կարպիս Հինտոյեան, Արմանտ Քիլիճեան, Էմիլ Մաղաքեան, Վահէ Մանուշակեան, Գօգօ Մկրեան, Վարուժ Միրպալեան, Մոնթեպելլոյի մասնաճիւղ, Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղ, Կարպիս Էօլմէսէքեան, Սագօ Թաթիկեան, Վիգէն Եփրեմեան եւ Յարութ Մարաշլեան:

● ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Վահրամ Դանիէլեան, Ռոստոմ ձեվահիրճեան, Չարեհ Յարութիւնեան, Չարեհ Գարակիլլիէան, Ժագ Քէշիշեան, Րաֆֆի Տօնապետեան, Մարսել Գարեան, Վարդգէս Թոքաթլեան, Յակոբ Թոքաթլեան, Վալգէն Լախոյեան, Պետօ եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Պետիկ Տէր Վարդանեան, Արա Պարսումեան, Կարպիս Պարսումեան, Ռազմիկ Փանոսեան, Թորոս Ռապիկեան, Պոսթընի մասնաճիւղ եւ Կէրի Յովակիմեան:

- ԳԱՆԱՏԱՅԷՆ Կարապետ Ն. Թովճեան:
- ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ձորճ Տաթէսեան:

### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. 2004ի լաւագոյն ֆուլթայդիստը՝ ըստ ՖԻՖԱի:
2. Թենիսի միջազգային մրցաշարք մը:
3. Հատալից - Ընտանիքի մէջ ընդունուած ձեռով:
4. Տնային գոյքեր - Յուցական ածական - Էական բայ:
5. Մեծ մայր - Միանայ - Իտալիոյ քաղաքներէն:
6. Եւրոպական հանրապետութիւն:
7. Փտուլթիւն - Տոյժ, կորուստ:
8. Վարակիչ, փոխանցուող - Լծորդութիւն:
9. Կտակեր հաւու ձայն:
10. Կաքաւազգի թռչուն մը - Ահարոն Տատուրեանի երկերէն՝ «...Անտառ»:
11. Շարլոթ Գորտէյի գոհը - Հաւաստի:
12. Իրանի նաւթով հարուստ շրջաններէն - Առարկայ:
13. Խոնաւ - Հայրապետական դաւազան - Հոլովակերտ մասնիկ:
14. Հիւսիսային Լիբանանի ծովեզերեայ շրջաններէն - Գրուածք:
15. Հայրենի մամուլէն - Խօսք մտիկ ըրէ - Հաշուել:
16. «Ֆորմիլա 1»ի բրիտանացի մրցավարորդ:
17. Հարսին քոյրը փեսային նկատմամբ - Առողջանութեան նշաններէն:
18. Արեւու ջերմութիւն - Արական օտար անուն:
19. Բնանկար - Առու, Կորի:
20. Ելիւ Լրմաք գետին պատմական անունը - Փօլ Կէսքոյնի ծածկանունը - Կողմ:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Դարձեալ - Հայաստանի գետերէն:
2. Վաճառանիւթ - Վերակացու իշխան:
3. Ճիւղ, բարունակ - Անմարդաբնակ:
4. Հայկական կուսակցութիւն - Նախաճաշիկ - Մեծ Հայքի նահանգներէն - Տարիք:
5. Ա. Մ. Նահանգներէն - Եգիպտական աստուած - Անվախ:
6. Ձայնի խաղ - Մինչեւ կեանքին վախճանը - Ունայն - Ձայնանիշ:
7. Երկու լումայ - Մարզական գոյքերու վաճառանիշ մը:
8. Ժխտական մասնիկ - Պարզկայ - Թաղման կարգ - 24 ժամ:
9. Յոփ - Արական օտար անուն - Սուտանի լիճերէն - Պապկայ:
10. Բնակարանի - Մայք Օհանեան՝ պատկերասփիւռի վրայ - Իրազեկ - Յուցական ածական:
11. Գեղամ Սարեանի երկերէն - Բոսոր - Ինքս - Շէն:
12. Գերմանացի բանաստեղծ (1772-1801) - Ռուս թեմիսկիւմըն:
13. Արական օտար անուն - Հատուկ զիւղերէն - Մեկնակէտ:
14. Աստուած - Յարաբերական դերանուն - Գուլիը կախ՝ հայ աղջիկ:
15. Սինեմա - Սերմնափակ - Կրակ - Արական օտար անուն:

1		→																	
2																			
3																			
4																			
5																			
6																			
7																			
8																			
9																			
10																			
11																			
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			

### ԹԻՒ 148 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	Յ	Ր	Ա	Ն	Ք	Տ	Ը	Պ	Է	Օ	Ր								
2	Ի	Ր	Ն	Ա	Ն	Ք	Տ	Ը	Պ	Է	Օ	Ր							
3	Լ	Պ	Գ	Դ	Մ	Ա	Ճ	Կ	Ի	Տ	Ր								
4	Ա	Պ	Ա	Ր	Ա	Ն													
5	Տ	Ա	Մ	Ո	Ի	Կ													
6	Ե	Ս	Ն	Ր															
7	Լ																		
8	Յ	Օ	Ք	Ա	Կ	Է	Ջ	Լ	Ա	Ճ									
9	Ս	Ր	Ե	Կ	Ս	Ա	Ր	Ա	Ն	Ք	Տ	Ը	Պ	Է	Օ	Ր			
10	Ա																		
11	Ա	Ա	Ջ	Բ	Ս	Ս	Վ	Ր	Ջ	Ա	Ա								
12	Ի	Կ	Գ	Ա	Մ	Ա													
13	Ք	Ա	Մ	Ա	Օ	Օ	Կ	Ի	Լ	Տ	Օ								
14	Ա	Ն	Ի	Լ	Է	Տ	Ի	Ը	Ր	Վ	Ա	Յ	Ն						
15	Ը	Ք																	
16	Ր																		
17	Ջ	Ա	Լ	Ի	Մ	Ա	Կ	Ա	Մ	Ե	Լ	Ի							
18	Ղ	Կ	Ա	Լ	Է	Ս	Ի	Ս	Պ	Է	Օ	Ր							
19	Մ	Է	Կ	Ա	Լ	Ա	Յ	Ն	Ք	Տ	Ը	Պ	Է	Օ	Ր				
20	Ճ	Կ	Ի	Կ	Ի	Մ	Ո	Ր	Վ	Գ	Ի	Մ	Ա	Կ					

ՀԱՌՆԱԳՉՄԱՆ ԻՄԻՋ ԱՆՉՅՎԷՆ ԳՐԱԿՆՍՈՆ ԿՐԻՏԵՑԷՆ

